Azg Ազգ

9 ԱՊՐԻԼ 2008 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 67 (3961)

Երդմնակալության արարողությանը կմասնակցեն 58 երկրների եւ 12 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ

Ապրիլի 9-ին կայանալիք նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանի երդմնակալության արարողությանը կմասնակցեն 58 երկրների պաշտոնական պատվիրակություններ, 12 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ինչպես Արմենպրեսին տեղեկացրեց ՀՀ նախագահի մամլո քարտուղար Վիկտոր Սողոմոնյանը, Ռուսաստանի պատվիրակությունը կղեկավարի ՌԴ Դաշնային ժողովի Պետական դումայի նախագահ Բորիս Գրիզլովը, ԱՄՆ-ի պատվիրակությունը՝ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի օգնական, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Մեթյու Բրայզան: Հյուրերի թվում են նաեւ Չեխիայի Սենատի նախագահ Պրեմիալ Սորոկան, Թուրքմենստանի Մեջլիսի նախագահ Ակջու Նուրբերդիեւը, Վրաստանի վարչապետ Վլադիմիր Գուրգենիձեն, Իրանի էներգետիկայի նախարար Փ. Ֆաթահը: Արարողությանը կմասնակցեն նաեւ Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբին, ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչ Հեյկի Տալվիտիեին, ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան, ԱՍՏՈ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ժան-Ֆրանսուա Բյուրոն, Արաբական լիգայի գլխավոր քարտուղարի տեղակալ Մ. Սեդեյը:

ՕՐԵՐԻ ՀՏՍ

«Ինչ ես ուզում, ինչ ես անում, եղբա՛յր»

Մայր աթոռ Սբ. Էջմիածնի ու նոր Գահակալի դեմ չարանենգ արավանքը նոր չի սկսվել ՀՀՇ-ական թերթում: Արդեն 5-6 տարուց ի վեր այդ թերթերն անառիթ ու անկիրթ հարձակումներ են գործում Մայր աթոռի եւ անձամբ Ամենայն հայոց հայրապետի դեմ, հընթացս չմոռանալով Հայ եկեղեցուն մեղադրել թուլության, իշխանություններին հրապարակավ չպարսավելու, օտար աղանդների դեմ արդյունավետ չպայքարելու եւ մահացու այլ մեղքերի համար: Փորձել թուլացնել եւ ապա մեղադրել՝ ինչո՞ւ ես թույլ: Իսկը ՀՀՇ-ական գործելակերպ, որը ցավալի հաջողությամբ կիրառվեց, սկսյալ 80-ականների վերջերից, մեր հայության մշավարակների, գիտնականների, բոլոր հեղինակությունների դեմ: Անգամ երջանկահիշատակ Վազգեն Ա հայրապետի դեմ, որին «ամոթ, ամոթ» բացականչություններով, «ԿԳԲ-ի գործակալ» արահայություններով էին դիմավորում Ազատության հրապարակում, իսկ հանրահավաքների ղեկավարները միտինգավորներին հաչալերում էին իրենց լռությամբ: Մինչդեռ նույն Վազգեն Ա հայրապետը, ընդամենը 2 տարի հետո, հանդիսացավ հայոց նորանկախ պետականության առաջին խոշոր նվիրատուն՝ պետության դատարկ գանձարանում զետեղելով ժողովրդական բանկերում ի պահ դրված Մայր աթոռի գրեթե ողջ գումարը՝ շուրջ 7 մլն դոլար:

Այսպես է եղել ընդհանրապես. Հայ եկեղեցին թիկունք է կանգնել հայոց պետության, իսկ վերջինիս բացակայության իր վրա է վերցրել նաեւ նրա բեռի մի մասը: Տեղի չի տվել հայ նախարարների պառակտողական պահանջների առաջ եւ Հայոց հայրապետը մերժել է նույնիսկ իր նզոված թագավորին հանձնել «օտարի գայլերին»:

Մայր աթոռի ու Գարեգին Բ կաթողիկոսի դեմ հեթանոս արավանքի վերջին սասկացումը արձանագրվեց նախագահական ընտրություններում, հատկապես նորընտիր նախագահին ուղղված Վեհափառ հայրապետի շնորհավորական նամակից հետո: «Գոնե սպասեր մինչեւ Սահմանադրական դատարանի վճիռը», իբր առարկում են այդ նամակին ընդդիմացող «իմաստունները»: Մինչդեռ ի սկզբանե հստակ էր, դեռ քվեարկությունից էաս առաջ, որ Լ. Տեր-Պետրոսյանն ու աջակիցները չէին ընդունելու որեւէ այլ արդյունք ու վճիռ, որը չէր հաստատի փոքրամասնության հաղթանակը մեծամասնության նկատմամբ: (Տեղին է հարց տալ՝ իսկ իրե՞նք ինչու չսպասեցին մինչեւ ԱԴ-ի վճիռը. այդ պարագայում, թերեւս, խուսափեին մարտիճկյան զոհերից ու կորուստներից): Ուստի, կարո՞ղ էր հայ եկեղեցու պետը սպասել մինչեւ բարեկամ ու ոչ բարեկամ երկրների պետերը շնորհավորեին եւ նոր միայն հետեւեր նրանց օրինակին:

ՀՀՇ-ական լրատվամիջոցները, էջանցելով Վեհափառ հայրապետին իր տան դարպասից ներս չընդունելու L. Տեր-Պետրոսյանի խայտառակ արարքը, իրենց պատվիրատու-առաջնորդին համահունչ եւ համաձայն, ինքնարդարացման ձախող փորձ են կատարում, նշելով, որ Վեհափառ հայրապետը L. Տեր-Պետրոսյանի տուն գնալուց առաջ հեռախոսով զրուցել է հանրապետության նախագահի հետ, իբր վերջինիս արտությունն է ստացել նախքան այդ քայլը կատարելը:

Տես էջ 2

Օսկանյանը գնում է, իսկ թե ո՞վ է գալիս՝ չեն ասում

Կունենա՞ք նախաշեղնող արտաքին գիծ, թե ավանդույթի համաչայն, երանի կտանք գնացածին...

Ա. ՏԱՐՈՒՏՅՈՒՆՅԱՆ.

Ասում են, թե կյանքը պատահականությունների, զուգադիպությունների շարան է, անկանոն կանոնավորված շարժում, ընթացք, որ ավելի հաճախ ինքնաբուխ բնութագրականներ ունի, քան պատճառահետեւանքային կապ կամ հիմնավորվածություն: Սակայն այս որակումները բնավ էլ քաղաքականությանը չեն վերաբերում, առավել եւս՝ արտաքին, քանի որ այստեղ իրավիճակն այնքիսին է, որ բոլոր հնարավոր ու անհնար պատահականություններն ու գիտակցված եւ ծրագրված քայլերը պետք է հաշվի առնվեն:

Վաղը, մեր տեղեկություններով, Հայաստանի արտգործնախարարությունում նախարար Վարդան Օսկանյանը հրաժեշտ է տալու իր ղեկավարած գերատեսչության աշխատակիցներին: Ու, թերեւս, արտաքին իրականության վերջին իրադարձությունների ֆոնին տարիների վաստակն ու կոմպետենտության արդյունքում ձեւավորված տարափելի զգուշավորությունը պետք է հաստներին իրենց տրամաբանական ավարտին:

Վարդան Օսկանյանն այլեւս արտգործնախարար չի լինի վաղը. իսկ այսօր դեռ պատասխանատու է արտաքին քաղաքականության վերջին երջանի անհաջողությունների ու մեկընդմիշտ մնալու է կողը նաեւ նույն այդ քաղաքական ատարեցի հաջողությունների: Ամեն դեպքում, որքան էլ շնորհակալանքի ու գնահատանքի արժանի լինի արտգործնախարարը, բնավ էլ դա չի որոշում այսօրվա արտաքին քաղաքական իրավիճակի թուլությունը:

Հայաստանն արդեն մի երկար ժամանակ կարիք ունի նախաձեռնող, համարձակ քայլերի գնացող արտաքին քաղաքականության, որ վերջին երջանում հավասարապես չէին դրսեւորում ոչ միայն արտգործնախարարը, այլեւ երկրի նախագահը: Այսպես կողմից, մի շարք օտարնդիր հարցեր բարդագույն իրողությունների առաջ կարող են կանգնեցնել արտգործնախարարության ղեկավար դառնալու նկրտումներ ունեցող ուզաթդ մեկին:

Տես էջ 3

ՀԿԿ խորհուրդը հաստատել է Տիգրան Սարգսյանի թեկնածությունը

Հայաստանում իշխող Հանրապետական կուսակցության խորհրդի երեկվա նիստում, խորհրդի 90 անդամները միաձայն կողմ են քվեարկել ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանին վարչապետի նոր թեկնածու առաջադրելու որոշմանը: Տիգրան Սարգսյանը ծնվել է 1960-ի հունվարի 29-ին, Կիրովական քաղաքում: 1983-ին ավարտել է Լենինգրադի Ն. Վոզնեսենսկու անվան ֆինանսատնտեսական ինստիտուտը: Տնտեսական գիտությունների թեկնածու է. 2005-ին նրան շնորհվել է Երեւանի տնտեսագիտական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում: 1990-1995-ին եղել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր: 1998-ից ղեկավարում է Հայաստանի Կենտրոնական բանկը, այդ պաշտոնում երկրորդ անգամ հաստատվել է 2005-ին 7 տարի ժամկետով:

Հանդիպում Ռաֆել Դինմի հետ

Հայ առաքելական եկեղեցու Ամերիկայի արեւելյան թեմի առաջնորդարանի համաչափում ապրիլի 3-ին հանդիպում է տեղի ունեցել Սան-Բրունի «Ակօս» թերթի հիմնադիր եւ գլխավոր խմբագիր Հրանտ Դինմի այրու՝ Ռաֆել Դինմի հետ: Ռաֆել Դինմը Նյու Յորք էր այցելել՝ Ֆորդիզմ համալսարանի կողմից Հրանտ Դինմին հետմահու շնորհված «Ուշագրավ իրագործումների» մրցանակը ստանալու: Հանդիպումը նախագահել է թեմական առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

Երկրաշարժ Վրաստան-Ադրբեջան սահմանային գոտում

Ապրիլի 8-ին, տեղական ժամանակով ժամը 19.17 րոպեին Վրաստան-Ադրբեջան սահմանային գոտում, վրացական Գորջանի քաղաքից 25 կմ հարավ-արեւելք, տեղի է ունեցել 4 մագնիսուժով երկրաշարժ: Ինչպես Արմենպրեսին տեղեկացրին ՍՊԱԾ-ից, ուժգնությունը էպիկենտրոնում կազմել է 5 բալ:

Կփոխվի՞ արդյոք Սուրեն Սուրենյանցի խափանման միջոցը

Ազգային ժողովի պատգամավորներ, «Հանրապետական» խմբակցությունից Արմեն Ատոյանը, Էդուարդ Շարմազանովը, Կարեն Ավագյանը, «Բարգավաճ Հայաստանից» Նարիա Զոհրաբյանը եւ «Օրինաց երկրից» Հովհաննես Մարգարյանը պատրաստվում են միջնորդություն ներկայացնել «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ, կալանավորված Սուրեն Սուրենյանցի խափանման միջոցը փոխելու մասին: Ինչպես «Ազգին» տեղեկացրեց պատգամավոր Արմեն Ատոյանը, «կան այլ պատգամավորներ, որոնք նույնպես պատրաստ են ստորագրելու այդ փաստաթուղթը, սակայն խնդիրը թվականի մեջ չէ: Սուրեն Սուրենյանցը ինձ, Էդիկին եւ Կարենին գրավոր դիմել էր, իսկ մյուս մեր գործընկերները ուղղակի միանում են մեր նախաձեռնությանը: Մենք փորձում ենք մասնիմալ օգնել մինչ ծերբակալությունը առողջական խնդիրներ ունեցող Սուրենյանցին: Այդ պատճառով էլ մենք միջնորդելու ենք, որպեսզի մեր սերնդակից, քաղաքական հակառակորդ գործընկերոջ առողջական վիճակը թույլ չի տալիս խափանման միջոցը շարունակել, ու գտնում ենք, որ այն պետք է փոխվի», պարզաբանեց Արմեն Ատոյանը:

Մ. Մ.

ՀԱՍԱՐԱԿ

Ձերբակալվածների կանայք պահանջում են ազատ արձակել իրենց ամուսիններին

Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբում երեկ կայացած մամլո ասուլիսին մասնակցել են Ալեքսանդր Արզումանյանի, Արարատ Զուրաբյանի, Նիկոլ Փաշինյանի, Մյասնիկ Մալխասյանի, Արշակ Մանուկյանի, Դավիթ Սարգսյանի, Հովհաննես Ղազարյանի եւ մյուսների կանայք: Անհա Մալխասյանը հայտարարել է, որ իր ամուսինը եւ ընդդիմության մյուս ակտիվիստները ձերբակալված են իրենց քաղաքական հայացքների պատճառով, մինչդեռ իշխանությունները փորձում են գործ սարքել եւ նրանց մեղադրել քրեական հանցագործություններում: ՀՀՇ վարչության անդամ Ա. Զուրաբյանի կինը՝ Էդիտա Եղոյանը տարակուսանք արտահայտեց, որ իրավապահ մարմինների ներկայացուցիչները կանոնավորապես տուն են գալիս, խուզարկություններ անցկացնում որպես կանոն վաղ առավոտյան, որպեսզի վախեցնեն երեխաներին: L. Տեր-Պետրոսյանի կենտրոնական նախընտրական շտաբի ղեկավար, արտաքին գործերի նախկին նախարար Ա. Արզումանյանի կինը՝ Մելիսա Բրաունը նախազգուշացրեց, որ այն, ինչ տեղի է ունենում այսօր իր ամուսնու եւ մնացած քաղաքական բանտարկյալների հետ, վաղը կարող է տեղի ունենալ եւ ներկա իշխանությունների ներկայացուցիչների հետ: Ձերբակալվածներին անհապաղ ազատ արձակելու, նրանց ընտանիքների անդամների նկատմամբ հետաքննությունը դադարեցնելու պահանջով են ապրիլի 8-ի ասուլիսում հանդես եկել նաեւ ընդդիմության ձերբակալված մյուս ակտիվիստների կանայք, քույրերը եւ մայրերը, հաղորդում է «Նոյյան տապանը»:

Հացադուլը շարունակվում է

«Արթիկ» քրեակատարողական հիմնարկում երօրյա հացադուլ է հայտարարել Լեւոն Տեր-Պետրոսյանի Անիի տարածաշրջանային նախընտրական շտաբի նախկին ղեկավար Հարություն Ուտույանը, որը դատապարտվել է 7 տարվա ազատազրկման: Ըստ «Ազատության» ռադիոկայանի, այդ մասին հայտնել է նրա տատի պատշտոն Թամարա Յալչյանը՝ վկայակոչելով դատապարտվածի հարազատներին: Հաղորդվում է նաեւ, որ «Հայ կամավորականների համախմբում» նախաձեռնության համակարգող Ժիրայր Սեֆիլյանը եւ նախաձեռնության անդամ Վարդան Մալխասյանը, ինչպես նաեւ «Ժամանակ երեւան» թերթի գլխավոր խմբագիր Արման Բաբաջանյանը անժամկետ հացադուլ են սկսելու:

3 գործ վերաքննիչ դատարանում

Ապրիլի 7-ի դրությամբ վերաքննիչ քրեական դատարան է բերվել 3 քրեական գործ: Ըստ վճռաբեկ դատարանի մամուլի քարտուղար Ալինա Ենգոյանի, վերաքննիչ քրեական դատարան բողոք է բերվել Երեւան քաղաքի Կենտրոն համայնքի թիվ 9 ընտրատարածքի թիվ 9/31 ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանի գործով: Վերջինս «Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծել» հոդվածով դատապարտվել էր 2 տարվա ազատազրկման: Դատարան բողոք է բերվել նաեւ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի ընտրատարածքի թիվ 22/22 տեղամասի հանձնաժողովի քարտուղար Անժիկ Դաբաղյանի գործով: Վերջինս դատապարտվել է 3 տարվա ազատազրկման: Վերաքննիչ քրեական դատարան բողոք է բերվել նաեւ Մարալիկ քաղաքի 36/34 ընտրական տեղամասում Լեւոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ Հարություն Ուտույանի գործով, վերջինս դատապարտվել էր 7 տարի ազատազրկման:

Վրաստանում՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու հափանիշների բացակայություն

Ջավախքն էլ խնդիրներ ունի՝ վրացերենի հետ առնչվող

Երեկ «Դայելի» ակումբ հրավիրված ԱԺ պատգամավոր, «Ազգ հայրենիք» կուսակցության փոխնախագահ **Շիրակ Թորոսյանն** ու Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտի փոխտնօրեն **Սերգեյ Մինասյանը** անդրադարձան Վրաստանի խնդիրներին եւ մասնավորապես՝ անդամակցությանը ՆԱՏՕ-ին: Շիրակ Թորոսյանը նշեց, որ Վրաստանը առեւտրաշրջանառության տեսանկյունից էր վարում դեռեւս անկախացման օրվանից՝ Գամսախուրդիայի ժամանակներից մինչեւ Սահակաշվիլի. «Այս հարաբերությունը մի կողմից կարելի է բնութագրել առեւտրաշրջանառության, մյուս կողմից՝ հակառուսական: Երկու հիմնական կարգախոս առաջ հասեց Սահակաշվիլին. առաջին՝ ինքը ուղիղ գնում է ՆԱՏՕ՝ հեռահար նպատակ ունենալով անդամակցելու Եվրոմիությանը՝ հաստատելով, որ վրացիները եվրոպական ազգ են, եվրոպական մենթալիտետ ունեն: Երկրորդ՝ նա հայտարարեց, որ տեսական կառույցները, տեսական մեթոդները չեն աշխատում, եւ կոոպերացիայի դեմ պայքարելով տեսք է աշխատեցնի տեսական մեթոդները: Եվ այդ հարաբերությունը բուռն կերպով շարունակվում է՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու համար»:

Ինչ վերաբերում է Բուխարեստում տեղի ունեցած գագաթաժողովին, որտեղ բարձրացված էր ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցը, ապա Շիրակ Թորոսյանը նկատեց, որ Վրաստանի չանդամակցելու պատճառներից է չափանիշներին չհամապատասխանելը. «Այն է՝ ռազմատեխնիկական, քաղաքական, ժողովրդավարության բացակայությունը: Ժողովրդավարության բացակայության բացահայտ դրսեւորումն էլ նկատելի դարձավ հունվարի հինգի նախագահական ընտրություններից, երբ ընդդիմությունը հանդես եկավ կոչով, որ Սահակաշվիլին ընտրվել է ոչ լեգիտիմ»:

Երկրորդ կարեւոր խնդիրը, ըստ Թորոսյանի, ոսնահարվում են ազգային փոքրամասնությունների իրավունքները՝ հատկապես Ջավախքի հայ բնակչության պարագայում. «Ջավախքում մեծ խնդիրներ կան տեղի հայության վրացերենին չտիրապետելու հարցում»:

Թորոսյանը նաեւ ուշադրություն է հրավիրում Թբիլիսիում բնակվող հայերի վրա, որոնք, իր համոզմամբ, չկա այնքիսի մի հայ, որ չտիրապետի վրացերենին. «Բայց արի ու տես՝ ոչ մի հայ պատգամավոր Թբիլիսիում չկա»:

Սերգեյ Մինասյան. «Լուրջ խնդիրներից մեկը իրավ լեզվական խնդիրն է: Վրացերենի իմացությունը առավելություն է վրաց հասարակության մեջ: Քանի որ մեր հայրենակիցները կտրված են վրացական հասարակական կյանքին վերաբերող հարցերից, ապա նրանց չի հետաքրքրում՝ Վրաստանի ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցը: Եվրոպական փորձը ցույց է տալիս, որ եթե տեսության մեջ 15-20 տոկոսը ազգային փոքրամասնություն է, ապա լեզուն տեսք է լինի փոքրամասնության լեզուն: Իսկ Վրաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին՝ Վրաստանին ոչ մի մահճոգության տեղիք չի տալիս, քանի որ Աբխազիայից, Օսիայից բացի ոչ մի կորցնելու բան չունի. ինչ որ կորցրել է՝ արդեն կորցրել է: Մենք Վրաստանից կարող ենք ավելի շուտ մտնել ՆԱՏՕ եւ ոչ միայն ՆԱՏՕ: Մենք ունենք լավ հարաբերություններ թե՛ ՆԱՏՕ-ի, թե՛ Միացյալ Նահանգների հետ»:

Ջավախքի բնակչությունը մի շարք նախաձեռնություններ է ցուցաբերել այս վերջին մեկուկես տասնամյակների ընթացքում:

Շիրակ Թորոսյանն էլ նշեց. «Նախ՝ ստորագրահավաք. բազմահազար ստորագրահավաք, որը ներկայացվում է վրացական պառլամենտին՝ խնդրելով հայոց լեզվին տալ տարածաշրջանային կարգավիճակ: Եվրոպայում ընդունված օրինակ է, եւ նման օրինակ կա Եվրոպայի 22 երկրներում: Ազգային փոքրամասնության լեզուն ունի տարածաշրջանային ելի կարգավիճակ»:

Ինչ վերաբերում է ջավախահայության դիտորդությանը՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցում, Թորոսյանը նշեց. «Ջավախքի հայության մեջ նստած է ռուսական կողմնորոշումը. նրանք միշտ ապահովություն էին զգում, երբ ռուսական ռազմաբազա կար այնտեղ՝ աշխատատեղեր, հոգեբանական ապահովության զգացողություն ունեին: Երբ ռուսական բազան դուրս էր բերվում՝ ռուս-վրացական խնդիր էր, մենք դրա հետ գործ չունենք: Եվ այսօր հանապազօրյա հացի վաստակման խնդիրը Վրաստանում բնակվող հայերի համար Ռուսաստանն է, իսկ ջավախահայությանը Ռուսաստանի մուտքի վիզա չեն տալիս»:

ՆԱՐԻՊ ՄՈՒՐԱԴՅԱՆ

«Ինչ ես ուզում, ինչ ես անում...»

1-ին էջից

Դարպաս ո՞ւմ հետ կհամայնիք, որ Վեհափառը խոսեր վերահաս արյունահեղությունը կանխելու համար ճանապարհ դուրս գալուց առաջ: Նիկոլի՞, թե՞... Պազուլինի՞: Կարող էր, չէ՞, Ռ. Քոչարյանը դեռ այդ ժամին (մոտավորապես 14:30) որեւէ առաջարկ ունենալ:

Դրան էլ առարկություն ունի Մեծ դեմագոգը: «Ես ասեմ, թե Վեհափառին ինչու չեմ ընդունել,- ասել է նա մարտի 11-ի երեկոյան իր առանձնասենյակում տեղի ունեցած մամլո ասուլիսում:- Շատ պարզ պատճառով, որ սխալ հասցեով էր եկել: Նա պիտի նրա դուռը գնար, ասեր՝ ինչ ես ուզում, ինչ ես անում, եղբա՛յր»: Բայց չէ՞ որ Լ. Տեր-Պետրոսյանը կարող էր Վեհափառին ընդունել ու նրան, եւ ոչ թե լրագրողներին, ասել այդ խոսքը՝ «եղբա՛յր», եւ այլն: Բայց ոչ, այդ պահին նրան պետք չէր որեւէ միջնորդություն ու միջամտություն. նրան պետք էր արյունը, այլապես օրեր առաջ անսացած կլիներ վերահաս վտանգի մասին, խաղաղության եւ հաշտարարության անհրաժեշտության մասին Վեհափառ հայրապետի եւ Մայր աթոռի Գերագույն հոգեւոր խորհրդի կոչերին: Այդ պահին նրան անհրաժեշտ էր ստորացնել բոլորին, այդ թվում նաեւ հայ եկեղեցու գերագույն պետին:

Ասենք, նա հաճախ է փորձել այդպես վարվել հայ եկեղեցու հետ: Գուցե հակաեկեղեցական դասիարակությո՞ւն է սացել, կամ վաս հիշողությունները՞ են մնացել Սբ. Էջմիածնի ծեմարանում դասավանդելու օրերից: Դժվար է ասել: Գուցե հեսագայում նրա կենսագիրները՝ եւ կամ հոգեբանները՝ պարզեն: Բոլորս դեռ հիշում ենք 1995-ը, Վազգեն Ա կաթողիկոսից հետո Սբ. Էջմիածնի գահի հաջորդ գահակալի ընտրության նախկին նախագահի միջամտությունը, կողմի՛ս միջամտության պարագան. Ազգային-եկեղեցական ընդհանուր ժողովի բացարձակ մեծամասնության կարծիքն արհամարհեց եւ փաստորեն կաթողիկոս նշանակեց Մեծի տանն Կիլիկիո երջանկահիշատակ կաթողիկոսին, հասկացնել տալով նաեւ, թե իր այդ «խորհուրդն» իրենի հեռահար նպատակը էջմիածին-Անթիլիաս շարունակվող տագնապի կարգավորումն է: Դժբախտաբար նման բան տեղի չունեցավ, չէր էլ կարող, ինչպես նախազգուշացրել էինք ուրիշներն ու ես: Ազգային-եկեղեցական ժողովը կաստրյալ ստորացումից փրկվեց միայն Գարեգին արք. Խաչատրյանի (այժմ՝ Կաթողիկոս ամենայն հայոց) ամոթեսակն (այս բառը L. Տեր-Պետրոսյանինն է) կեցվածքի շնորհիվ: Հակառակ ժողովում իր հավաքած գերակշիռ ձայներին, 3-րդ փուլի դիտարկությունից առաջ Արբազանը իմանալով հայտարարեց, պատճառաբանելով, որ չի կարող մրցակցել օծյալ կաթողիկոսի հետ: Խորհում կար նաեւ ուրիշ պատճառ՝ այդ օրը Մայր տաճարի գավիթում ամեն ինչ «փրամրեսում էին» ներին գործերի նախարարը, ազգային անվտանգության եւ ՀՀ նախագահի թիկնազորի պետերը, իսկ Գերսում՝ Գարեգին արքազանի գիտակցությունը, թե հայ ժողովրդի հոգեւոր պետը չի կարող առճակատման մեջ գտնվել աշխարհիկ իշխանության՝ պետության ղեկավարի հետ:

Անշուշտ, հայ եկեղեցու համար շատ հետ է տարբեր առիթներով ընդադրել պետական իշխանություններին, ժողովրդական հայտարարություններ կատարել եւ բարձրացնել իր հեղինակությունը: Բայց ինչ հեղինակություն, որը հիմնված չէ ազգային միասնականության, ազգային պետականության հիմքերի ամրության վրա: Մանավանդ որ այդ բոլոր ընդադատությունները կարելի է անել առանց հրապարակայնացնելու, հորդորներով ու բանակցություններով: Վերջապես, հայ եկեղեցին կուսակցություն կամ հիմնարկ չէ՛, ոչ էլ որեւիցե շարժում:

Բաց ասի, անշուշտ կարելի է զանազան բացթողումների համար ընդադրել մեր եկեղեցին, նրա սպասավորներին, անգամ գերագույն պետին: Ի տարբերություն այլոց, մերը ժողովրդավարական եկեղեցի է, այսինքն՝ մենք մաս ենք կազմում նրան եւ իրավունք ունենք մեր կարծիքը ունենալու ազգային-եկեղեցական հարցերի տնօրինման հարցում, նրա հզորացման համար: Սակայն այդ կարծիքը չի կարող պարտադիր լինել մեծամասնության համար, ինչպես յուրաքանչյուր ժողովրդավարական կառույցում:

Սակայն այդ կարծիքն ու ընդադատությունը չեն կարող արտահայտվել անպատկառ ու լկտի ձեւերով, սուտ վկայություններով, ստորացման միտումներով: Ու մանավանդ՝ դրանք չեն կարող ինչել այնքիսի մարդկանց բերանով, որոնց հոգու ծննդավայրը հայկական եկեղեցին չէ:

Իսկ վերջում՝ հոետորական մի հարց. ինչո՞ւ L. Տեր-Պետրոսյանը գոնե այս հարցում չի սասում իրեն հլու-հնազանդ հետեւող մարդուին:

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ալավերդին հին ու նոր քաղաքապետ ունի

Ալավերդու քաղաքապետի ապրիլի 6-ին տեղի ունեցած ընտրություններին քվեարկեց 20 հազար բնակչությունից մասնակցել է շուրջ 9 հազար ընտրող՝ ընտրելու իրավունք ունեցողների 50 տոկոսը: Քաղաքապետի թեկնածուներից ՀՅՊ անդամ Ալբերտ Սարգսյան եւ ՀԺԿ անդամ Արթուր Նալբանդյան, ընտրվել է վերջինը: Քվեների բաշխումը եղել է 84 եւ 16 տոկոս հօգուտ 37-ամյա հանրապետական Արթուր Նալբանդյանի: Նա Ալավերդու քաղաքապետի պաշտոնում աշխատել է նախորդ՝ 2005 թվականի մայիսի 8-ին կայացած ընտրություններում հաղթելուց հետո եւ հաջորդ 4 տարիներին էլ նույն պաշտոնակատարման իրավունքը սաստել է ալավերդցի ընտրողներից:

«Ալավերդին միշտ դրականապես տարբերվել է իր ընտրություններով եւ այս անգամ էլ տարբերվեց: Մեր ցարտանմն ու միշտ, արդյունավետ հանդարտությունը «Արմենիան հափիր փրոդամ» ընկերության հետ բերեցին իրենց արդյունքը՝ ժողովուրդն այդքան մեծ վստահության քվե տվեց», Ալավերդիում հրավիրված ասուլիսին ասաց հին ու նոր քաղաքապետ **Արթուր Նալբանդյանը**: Նա վստահեցրեց, որ վերջին երեք տարիներին ոչորս չի եղել, որում Ալավերդին դրական տեղաշարժ չարձանագրի: Քաղաքապետը մտադիր է նույնկերպ շարունակել առավել ուշադրություն կենտրոնացնելով որոշակի ոլորտների՝ զբոսաշրջության, քարամշակման, փայտամշակման վրա: Ալավերդիում գործում է քարամշակման 11 արտադրամաս, որոնցում մշակվում է տեղական լալվարիտը, որն այդ անունն է կրում Լալվար լեռան լանջից արդյունահանվելու պատճառով: Մինչ այժմ այն օգտագործվել է հիմնականում որպես տաղանքար, սակայն լիովին հնարավոր է եւ արդեն իսկ սկսել են օգտագործել նաեւ շինարարությունում: Ալավերդիում զբոսաշրջության զարգացման հեռանկարներն էլ ոեալ են թվում քաղաքապետին՝ տեսարժան վայրերը շատ են, բնությունը՝ հարուստ, բայց դա շատ միչ է: Ճանապարհներ, հյուրանոց, տրանսպորտներ եւ ենթակառուցվածքների որոշ հանգարգի ստեղծման անհրաժեշտությունը տեսանելի է Արթուր Նալբանդյանին: Նա նաեւ մթնոլորտի մաքրությունը կարեւորեց եւ այդ տեսանկյունից շահեկան համարեց Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործումը. «Հազար ու մի թնարկումներից հետո Թեղուտը կբացվի: Ալավերդու ծուխման արտադրամասը կկանգնի եւ մթնոլորտի մաքրության հարցը կլուծվի: Մեր քաղաքի աշխատատեղերը չեն պակասի՝ մի քանի հարյուր մարդ կաշխատի Թեղուտում ու կարող տեղում կառուցվող հանրակացարանում», տեղեկացրեց քաղաքապետն ու ընդգծեց, որ առավել կարեւորում է խնդրի լուծումը, քանի բյուջեում 50-60 միլիոն դրամի առկայությունը բարդահոգեբանական խնդրի լուծման համար: Պաշտոնական տվյալներով՝ Ալավերդու 20 հազար բնակչության 20 տոկոսը գործազուրկ է եւ 1050 աշխատատեղ ապահովող «Արմենիան հափիր փրոդամ» ընկերության գործունեության սահմանափակումը Ալավերդիում չի անհանգստացնում Արթուր Նալբանդյանին, քանի որ կա Թեղուտի հանքավայրում ալավերդցի մասնագետներին աշխատանով ապահովելու եւ Ալավերդու զարգացմանն ամենայն նպաստելու մասին «Վալլեխ» խումբ ընկերությունների (որի կազմում է «ԱԶՓ»-ն) նախագահ Վալերի Մեջլումյանի վստահեցումը:

Ի դեմ, քաղաքապետի ընտրություններին հաջորդած գեղեցկության եւ մայրության տոնը Ալավերդու եկեղեցամերձ հրապարակում բացթայա համերգով ու հրավառությամբ նշվեց, որը նույնպես քաղաքապետարան-«Վալլեխ» համագործակցության արդյունքի էր:

Պ. Ն.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հիմնադրվել է 1921 թվականին
Գլխավոր եւ հիմնադիր
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Հեռ. 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱՀՈՒԲ ԱՎԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՀՈՒԲՅԱՆ / հեռ. 529221
Հաշվապահություն (գրասենյակ) / հեռ. 582960
Լուսագրության սենյակ / հեռ. 581841
Հանձնարարական ծառայություն / հեռ. 582483
Հարցերով լրահաղորդակցության ծառայություն / հեռ. 529353
Հանձնարարական բաժնի «Ազգ» թերթ
Թերթի նյութերի ամբողջական թե մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռարձակությամբ առանց խմբագրության գրաւոր հանձնարարության խոտիր արգելվում են հանձնարարությունները ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նյութերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում
Գ. սարով յուրաքանչյուրը գովազդային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 0010

ԱԺ հայտարարությունը՝ ԼՂ խնդրի կարգավորման վերաբերյալ

Երեկ Ազգային ժողովի նախագահ **Տիգրան Թորոսյանը** ԱԺ նիստում հանդես եկավ ԼՂ խնդրի կարգավորման վերաբերյալ հայտարարությամբ: Այն նախագծի տեսք ուներ, որն այդպիսով երջանառության մեջ դրվեց արտահերթ եւ կննարկվի հավանաբար հինգշաբթի: Այս նախագծով վկայակոչվում է ադրբեջանական կողմի վերջին երջանի ռազմատենչ ոգեւորումը՝ ՀՀ նախագահին եւ կառավարությանը ԱԺ-ն առաջարկում է ակտիվացնել եւ ընդլայնել ԼՂ խնդրի վերաբերյալ միջազգային հանրությանը լիարժեք տեղեկացնելուն ուղղված միջոցառումների մշակման եւ իրականացման ջանքերն ու հնարավորությունները, ԼՂ խնդրի կարգավորմանն ուղղված հայասանյան հաղթականությանը հաղորդել նախաձեռնողական բնույթ եւ միջազգային իրավունքի երջանակներում ձեւակերպել այն իրավական հիմքերը, որոնք Ադրբեջանի կողմից ռազմական ագրեսիայի կամ այլ բռնի միջոցների կիրառման դեպքում ՀՀ-ին հնարավորություն կտան աղաիովելու ԼՂՀ լիարժեք անվտանգությունն ու պաշտպանությունը:

Առդյոք այս հայտարարությունը ՀՀ նախագահի՝ Հայաստանի կողմից անհրաժեշտ պահին ԼՂՀ ճանաչման հնարավորության վերաբերյալ վերջին հայտարարության շարունակությունն է, այս հարցին լրագրողների հետ ճեպազրույցում ԱԺ նախագահ Տ. Թորոսյանն այսպես արձագանքեց. «Մեր աշխատանքը միշտ եղել է մեկ ընդհանուր տրամաբանության երջագծում, կարելի է նաեւ էդպես համարել: Որովհետեւ տարբեր ննարկումներ եղել են եւ՝ նախագահի, եւ՝ վարչապետի հետ, սա հենց այնպես առաջացած հայտարարություն չէ, սա ընդհանուր դիտարկում է»: ԱԺ նախագահը նաեւ ասաց, որ թեեւ Հայաստանի կողմից ԼՂՀ ճանաչումը ընդունելի տեսակետ է, բայց քանի որ օրինագծում դեռ դա չի առաջարկվում, ուստեմն կարելի է ենթադրել, որ նախագահի ասած պահը չէ:

Իսկ թե ինչպես են իրագործվելու նախագծի առաջարկները՝ սա կառավարության եւ երկրի նախագահի լիազորությունների երջանակում է:

Նախագծի վերաբերյալ առաջիններից մեկն առաջարկ ներկայացնող **Վիկտոր Դալլաքյանը** նախագիծը ողջունելի եւ Ազգային ժողովի համապատասխան վերաբերմունքի դրսեւորում համարեց Ադրբեջանի վերջին քայլերին, բացի այդ՝ քաղաքության ոլորտում ակտիվանալու անհրաժեշտություն իսկապես կա, քանի որ քաղաքական պայքարում, ըստ Վ. Դալլաքյանի, Հայաստանը տանուլ է տալիս: ՀՅԴ-ից Վահան Հովհաննիսյանը ԱԺ հայտարարությունների ժամին նույնպես ողջունեց նախագիծը՝ այս հայտարարությունը, ԼՂ խնդրի կարգավորման ուղղված հայասանյան հաղթականությանը հաղորդել նախաձեռնողական բնույթ եւ միջազգային իրավունքի երջանակներում ձեւակերպել այն իրավական հիմքերը, որոնք Ադրբեջանի կողմից ռազմական ագրեսիայի կամ այլ բռնի միջոցների կիրառման դեպքում ՀՀ-ին հնարավորություն կտան աղաիովելու ԼՂՀ լիարժեք անվտանգությունն ու պաշտպանությունը:

Ադրբեջանի եւ Արցախի դեմ, մենք անտարբեր մնալ չենք կարող եւ պետք է կարողանանք այս գործին լծվել ազգովին», ասաց նա:

Լրագրողների հետ ԱԺ նախագահի զրույցը տեղի էր ունենում մոտ ժամը 16-ին, այնպես որ ՀՀԿ խորհուրդը դեռ հավանություն չէր տվել վարչապետի պաշտոնում ԿԵ նախագահ **Տիգրան Սարգսյանի** թեկնածությանը: «Արդյոք այդ թեկնածությունը նախապես ննարկվե՞լ է», հարցին Տ. Թորոսյանը դրական պատասխանեց, այո, ննարկվել է, նաեւ՝ ՀՀԿ խորհրդի նիստում է ննարկվելու, սակայն ավանդույթով՝ խորհուրդը եւ կուսակցության նախագահը միշտ համակարծիք են եղել, մենք չենք ունեցել այնպիսի նախադեպ, երբ տեսակետները տարբերվեն:

Անդրադառնալով Վենետիկի հանձնաժողովի անդամների սպասվելիք այցին՝ ԱԺ նախագահը հիշեցրեց, որ Վենետիկի հանձնաժողովի եւ ընդհանրապես Եվրախորհրդի հետ տեսական, արդյունավետ աշխատանքի փորձ կա, այդ աշխատանքը շատ պարզ սխեմա ունի՝ փորձաննություն, փորձագետների տեսակետներ, ապա հանդիպում-ննարկում է տեղի ունենում, եթե անհրաժեշտություն է լինում՝ ձեւավորվում է նախագիծ եւ այդ նախագիծն ընդունվում է ԱԺ-ում: «Ես կարծում եմ՝ ննարկման անհրաժեշտություն կա, վստահ եմ՝ Վենետիկի հանձնաժողովը նույնպես համակարծիք է, որովհետեւ ննարկում անցկացնելու առաջարկը սիրով ընդունվել է, եւ ինչպես նախորդ անգամներում, մենք միասին կաշխատենք եւ լավ լուծումներ կգտնենք», ասաց նա՝ հիշելով, որ զանգվածային միջոցառումները կարգավորող օրենքի փոփոխությունների դեպքում այս սխեմային չէր լինի սպասել, մինչեւ փորձաննություն ավարտ, ննարկում տեղի ունենար, շեշտումներ արվեին. «Կարծում եմ, իրավիճակը թելադրում էր առաջ արձագանք, այս առումով մասնավորապես Ազգի խմբի հետ հանդիպման ժամանակ իրենք ընդգծում են դրսեւորել»: Քննարկումները Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցիչների հետ ավանդական ձեւաչափով են լինելու, լրագրողներիս մեկնաբանություններն էլ տեղին չեն՝ արդյունավետ, օգտակար ննարկումներ կլինեն:

Իսկ մարտիմեկյան իրադարձություններն ուսումնասիրող ԱԺ ժամանակավոր հանձնաժողով ձեւավորելու Վ. Դալլաքյանի նախաձեռնությանն այսպես անդրադարձավ. «Իհարկե, կանոնակարգով նախատեսված քայլ է, սակայն ժամանակավոր հանձնաժողովները, հատկապես նման հարցերի հետ կապված, խոր ննարկումների արդյունքում պետք է ձեւավորվեն, եթե դրա անհրաժեշտությունը լինի, որովհետեւ չափազանց կարեւոր է ճշգրիտ սահմանել հարցերի այն շրջանակը, որոնք պիտի ուսումնասիրի այդ հանձնաժողովը»: Օրինակ, առաջարկության մեջ է հետընտրական շրջանում մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրումը. «Մենք մարդու իրավունքների մշտական հանձնաժողով ունենք, մարդու իրավունքների պաշտպան, որոնց հետ բուն անելիքն է այդ ուսումնասիրությունը», նկատեց նա:

Գնահատելով նախագահ Քոչարյանի վերջին 10 տարվա նախագահության շրջանը՝ ԱԺ նախագահը նկատեց. «Եղել են բավական դժվարին տարիներ, որովհետեւ այդ 10 տարիների ընթացքում մենք դիմակայել ենք լուրջ մարտահրավերների, բայց միաժամանակ պիտի ասեմ, որ առանձին խնդիրներից բացի, որոնց մասին Հայաստանի նախագահը վերջերս խոսեց, ընդհանուր առմամբ, հատոզված եմ, այդ 10 տարիները եղել են Հայաստանի համար առաջընթացի, հաջողության տարիներ, եւ մեր երկրի համար ստեղծվել է այն կարեւոր հիմքը, որի վրա մենք պիտի կառուցենք Հայաստանը, որը բոլորս երազում ենք»:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պատգամավոր Ատոմ Տոնոյանի հայտարարությունը ԱԺ-ում

Հարգելի խորհրդարան
Հարգելի հայրենակիցներ

Անցած տնտեսական խոր ճգնաժամի տարիներին մեր երկիրը, չունենալով հարուստ բնական ռեսուրսներ, վաճառի հանեց իր ոռակյալ աշխատուժը: Առ այսօր տարեկան մոտ 2 միլիարդ ամերիկյան դոլար կազմող արտասահմանից Հայաստան մտնող գումարի մեծ մասը իրենց հարազատներին են ուղարկում դրսում աշխատող մեր հայրենակից ոռակյալ մասնագետները:

Համոզված եմ, որ նման մասնագետների պատրաստման գործը Հայաստանում, չնայած ձեռնարկվող քայլերին, սկզբունքորեն ցածր մակարդակի վրա է: Խիստ միջնակարգ մասնագիտական կրթության համակարգի կատարելագործման մասին է:

Իմ խորին համոզմամբ, գործող օրենքը լայն հնարավորություններ է տալիս ոլորտի արդյունավետ զարգացմանը, հատկապես ավագ դպրոցի մասին նոր, վերջերս ընդունված եւ նոր ուսումնական ծրագիր իրագործված ծրագրի միտ կազմակերպմամբ մենք հնարավորություն կունենանք ավագ դպրոցում մասնագիտությունների ուսուցման գործում որակապես նոր մակարդակ ապահովելու, եւ այն իր շարունակությունը կարող է ունենալ մասնագիտական այլ ուսումնական հաստատություններում: Գտնում եմ, որ մեր գործարարները եւ ձեռնարկատերերը միջոց չտեսք է խնայեն դպրոցում մասնագիտական ուսուցման դասասենյակների կահավորման գործում:

Հարեւան Թուրքիան, նամանավանդ Եվրոպայում, այսօր առաջատար դիրքեր է գրավում մասնագետ-վարպետների աշխատուժը արտահանելու բնագավառում: Ավելին կարող է լինել Հայաստանի դեպքում, քանի որ մեր երկիրն այս բնագավառում իր հին եւ հարուստ փորձով կարող է մրցունակ լինել ցանկացած պետության հետ: Եթե տնտեսական դժվարությունները հաղթահարելու միջոցը տասնամյակներ շարունակ եղել եւ մնում է արտասահման մշտական կամ սեզոնային աշխատանքի գնալը, ուստեմն այս հարտությունը Հայաստանում կարգավորելու եւ միշտ օգտագործելու խնդիր կա: Այստեղ ես, ինչպես բոլորս սովորող երեխաների խնդրին եմ անդրադարձել մեր նախորդ հայտարարությունում, մեծ անելիք ունեն մեր պետական եւ մասնավոր ձեռնարկությունները:

Գտնում եմ, որ գյուղատնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի, շինարարության եւ այլ ոլորտներում մասնագետների պատրաստման պատվերների իջեցման դեպքում հիմնական ձեռնարկությունները կարճ ժամանակահատվածում արդիականացված կլինեն որակյալ մասնագետներով, որը կխթանի համակարգի առողջացումը եւ ոռման որակը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության խմբակցության հանձնաժողովի եւ մեր խմբակցության շահագրգիռ պատգամավորների մասնակցությամբ մենք որոշել ենք ստեղծել աշխատանքային մի խումբ, որը կհավաքի համապատասխան օրենսդրական նախաձեռնության համար անհրաժեշտ բոլոր նյութերը: Այդ խումբը պատրաստ է համագործակցել կրթության եւ գիտության նախարարության հետ՝ նպատակ ունենալով իրականացնել միջնակարգ մասնագիտական կրթության համակարգի կատարելագործումն ու կայացումը: Մենք պատրաստ ենք լսելու շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Մեկ առաջարկություն արդեն առկա է: Պետությունը կարող է հայտարարվող մրցույթների ժամանակ նախապատվություն տալ այն կազմակերպություններին, որոնք միջնակարգ դպրոցներում հովանավորում եւ կազմակերպում են մասնագիտական կողմնորոշման եւ աշխատանքի ուսուցման դասընթացները:

Մեր նպատակը մեկն է. Հայաստանում ունենալ որակյալ աշխատուժի պատրաստման ժամանակակից համակարգ, որի պտուղները կնպաստեն ամբողջ հասարակությանը:

ԱՏՈՄ ՏՈՆՈՅԱՆ

8 ապրիլի, 2008, Երեւան

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 11.00-ին «Ուրբաթ» ակումբի հյուրն է ՍԻՄ նախագահ Հրանտ Խաչատրյանը: Թեման՝ ներքաղաքական իրադարձությունների եւ երդմնակալության արարողությունից հետո հնարավոր զարգացումները, ինչպես նաեւ անդրադարձ ՍԻՄ-ի տարբեր ծավալված նոր խնդիրներին, որոնք հյուրը դիտարկում է ներքաղաքական իրադարձությունների համատեքստում:

◆Ժամը 14.00-ին Ա. Սպենդիարյանի անվան Երեւանի օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կսկսվի Նորընտիր նախագահի երդմնակալության արարողությունը:

◆Ժամը 14:00-ին Մյասնիկյանի արձանի մոտ ծաղիկներ կտեղադրվեն մարտի 1-ի զոհերի հիշատակին:

Կանադահայերը դատվում են Ջոն Էվանսին

«Կանադահայոց կոնգրեսը», ստեղծված 2004-ին, իրեն մաս կազմող կազմակերպությունների անունից խմբագրությանը հասցեագրած հայտարարությամբ տեղեկացնում է, որ մարտի 19-ին յուտահատուկ հանդիպում է տեղի ունենալու ՀՀ-ում Միացյալ Նահանգների նախկին դեսպան Ջոն Էվանսի հետ, որն իր դիվանագիտական կարիերայից զրկվեց Հայոց ցեղասպանության մասին ճշմարտությունը հրապարակայնորեն ասելու հետեւանքով:

«Ուիլյամս Բուրգում (Վիրջինիա) ծնված դիվանագետը որուսաց դպրոցում է ուսումնասիրել Եյլ եւ Կոլումբիա համալսարաններում՝ նախքան արտգործնախարարություն մուտք գործելը: Որպես խորհրդային բաժնի փոխտնօրեն, հաստատել է ամերիկյան կառավարության եւ զանազան կազմակերպությունների աշխատանքները Հայաստանում՝ ուղղված 1988-ի երկրաշարժի հետեւանքների վերացմանը: Իր այդ աշխատանքի համար հատուկ շնորհակալության է արժանացել Հայաստանի կառավարությունից: Խոսում է անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, չեխերեն եւ պարսկերեն: Ներկայումս սովորում է հայերեն, գրված է հայտարարության մեջ, որը կոչ է անում կանադահայերին բաց չթողնել այդ եզակի առիթը՝ հանդիպելու հայ ժողովրդի իսկական բարեկամի հետ:

Հ. Ծ.

Օսկանյանը գնում է, իսկ թե ո՞վ է գալիս՝ չեն ասում

1-ին էջից

Մասնավորապես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում Ադրբեջանի անկախացած բանաձեւից հետո նույն այդ որակի հարթակներում Հայաստանը ինքնարտահայտման խնդիր ունի: Այս առնչությամբ էլ արտգործնախարարությունը ժամանակին գործելու փոխարեն նախընտրեց պատրաստվել, թե բանաձեւը իրավական ուժ չունեցող խորհրդատվական փաստաթուղթ է, մինչդեռ պետք էր նախապես անել հնարավորը ոչ թե մի քանի երկրների ձեռնոցի մնալով գոհանալու, այլ կողմ արտահայտվողներին տարհամոզելու ուղղությամբ:

Չարվեց, ճիշտ այնպես, ինչպես ՀՀ մի շարք ներկայացուցչություններում, դեսպանություններում, հյուպատոսություններում: Եվ քանի որ մարտյան իրադարձություններն ի հայտ բերեցին նաեւ արտգործնախարարության համակարգում կադրային խնդիրներ, ակնհայտ դարձավ, որ աշխատելը տվյալ դեպքում գերադասելի չի եղել լաչախատելուց: Արդյունքներն էլ, ինչպես տեսնում ենք, իրենց սպասել չտվեցին:

Եվս մեկ օրինակ կարելի է բերել դարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցություններում միջնորդական առաքելություն իրականացնող ԵԱՀԿ Մինսկի խմբի հետ հայասանյան հարաբերությունների տիրույթից: Մասնավորապես, այսօր Հայաստանի նախագահի երդմնակալության արարողությանը կմասնակցի ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ, ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ, ԱՄՆ Հադսոնի ինստիտուտի եվրասիական հաղթականության հարցերով ծրագրի ղեկավար Զեյնո Բարանի ամուսին Մեթյու Բրայզան:

Եթե հաշվի առնենք միայն վերջին նշվածը, արդեն իսկ բավարար է շատախոս, ամեն առիթով չգիտես էլ ինչ տրամաբանությամբ ամերիկյան գնահատականներով ամեն ինչ հեղեղող Բրյուսելյան Մինսկի խմբից դուրս հավիրելու համար: Իսկ եթե հավելենք, որ դարաբաղյան հարցում միջնորդ ներկայացվող Բրայզան ինքն իրեն մասնագետ դիվանագետ է որակում կնոջ հետ հարաբերություններում իր աշխատանքի անկախությունը պահելու հարցում այն դեպքում, երբ նույն Զեյնո Բարանը արդեն ուրեմն անգամ ադրբեջանական դիրքորոշումներով հարցազրույցներ է տալիս, այցելում է սիրելի հարեւաններին ու արժանանում Ալիեւի ընդունելությանը, ապա Հայաստանի արտգործնախարարության լռությունը ուղղակի սխալ է՝ ինչխան էլ կոմպլեմենտար լինի մեր կեցվածքը:

Ամեն դեպքում, Օսկանյանի հետ թերեւս փակենք նաեւ կոմպլեմենտարության երջանը... Ու դառնանք ավելի նախաձեռնող, սակայն ո՞ւմ հետ՝ սա դեռ մնում է խնդիր: Երջանալող հավանական թեկնածուական անունների դժվար է որեւէ մեկի պարագայում արտաքին քաղաքականության հաջողությունների մասին երազելը, թերեւս բացառությամբ Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Էդուարդ Նալբանդյանի պարագայի, որ եւս, իր հերթին, ոչ մի երաշխավորված վիճակի հնարավորության մասին մտածելու առիթ չի տալիս:

Հուբ-երեկո՝ նվիրված Խորեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսին

«Խորեն Վեհափառի սուրբ օրհնությամբ մեր կյանքը դարձնենք աղոթք ու նվիրում, ի շինություն հայրենիքի, ի պայծառություն մեր Մայր եկեղեցու եւ ի բարություն հայ ժողովրդի», պատգամեց Գարեգին Բ կաթողիկոսը

Մայիսի 6-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, օրհնությամբ Գարեգին Բ ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսի տեղի ունեցավ «Նահատակ հայրապետը» խորագրով հուբ-երեկո՝ նվիրված երանաշնորհ Խորեն Ա Մուրադբեկյան Ամենայն հայոց կաթողիկոսի նահատակության 70-րդ տարելիցին: Երեկոն կազմակերպել էին Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը եւ Հայաստանի ազգային արխիվը:

Հուբ-երեկոն բացեց Մայր աթոռի արխիվի տնօրեն Ասողիկ Խաչանա Կարապետյանը: Իր խոսքում նա հայը տեղեկացրեց, որ Խորեն Ա կաթողիկոսի նահատակության 70-րդ տարելիցի առիթով առաջիկայում լույս է ընծայվելու Խորեն Ա-ի անտիպ վավերագրերի եւ լուսանկարների մի հատոր:

Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսի կենսագրությանը, ազգային-եկեղեցական կյանքում ունեցած մեծ ավանդին ու եղեռնական մահվան հանգամանքներին անդրադարձան եղիշե ավագ քահանա Սարգսյանը եւ Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը:

Այնուհետեւ շարականների եւ ազգային-ժողովրդական երգերի կատարումներով հանդես եկավ հայկական հնագույն երաժշտության «Շարական» համույթը՝ Դանիել Երաժիշտի գեղարվեստական ղեկավարությամբ: Ապա ներկաները դիտեցին «Շողակաթ» հեռատաքնկերության պատրաստած ֆիլմը՝ նվիրված Խորեն Ա Մուրադբեկյան ամենայն հայոց կաթողիկոսին:

Երեկոյի ավարտին ամենին իր հայրապետական պատգամն ու օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետը: «Ազգընտիր Խորեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսը բազմեց Լուսավորչի գահին՝ զորացնելու առաքելահիմն Հայոց եկեղեցին, մեր բարեպաշտ նախնյաց օրհնակով անմար պահելու լույսը հրիսոնեական հավատի, իրագործելու համայն հայության նվիրական իղձերն ու երազանքները:

...Ասվածաձայն եւ եկեղեցաձայն բռնապետությունը, չկարողանալով ընկճել հավատն ու ոգին արիասիրտ հայրապետի, մահվան մատնեց Քրիստոսի հավատարիմ ծառային, բայց ի զորու չեղավ հայ ժողովրդի հոգում մոռացության մատնելու բարի հիշատակը նահատակյալ կաթողիկոսի եւ ժողովրդի սերը՝ հանդեպ իր հայրապետը:

Կան հիշատակներ, որոնք վեր են ժամանակի իշխանությունից՝ արձանագրվելով ոչ միայն ազգի պատմության ոսկե էջերում, այլեւ յուրաքանչյուրի հավատավոր սրտում ու հոգում: Այդպիսին է եւ այդպիսին միշտ լինի նահատակյալ Ամենայն հայոց կաթողիկոսի՝ Խորեն Մուրադբեկյանի հիշատակը, ֆանզի բազմավաստակ հայրապետը՝ իբրեւ Գրիգոր Լուսավորչի գահի արժանավոր ժառանգորդ, հերոսացավ ու հավերժացավ իր բոլորանվեր կյանքի ճանապարհին՝ պատասխանելով եկեղեցին Հայաստանյայց, իր օրինակով ամոր պահելով լույս հավատն ու եկեղեցասիրությունը հայորդյաց:

Ամենուս՝ ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի, համայն ժողովուրդը հայոց որդիական սիրով է հիշում սիրելի Վեհափառին, ում հոգու մեջ մշտապատ էր մեր վսեմագոհ հայրապետների շունչն ու ոգին», նշեց Նորին սրբությունը:

Հուբ-երեկոյին կազմակերպվել էր նաեւ Խորեն կաթողիկոսին առնչվող արխիվային փաստաթղթերի եւ նյութերի ցուցադրություն:

Նույն օրը, Մայր աթոռ Սբ. Էջմիածնում, հավատաց Սբ. պատարագի, նախագահությամբ Ամենայն հայոց հայրապետի կատարվել էր հոգեհանգիստ՝ ի հիշատակ Խորեն Ա նահատակ կաթողիկոսի:

Երուսաղեմի հայերը ծրագրել են համազգային հավաք անցկացնել

Սուրբ երկրում անցկացրած իրենց երիտասարդ տարիների բերկրանքը վերհիշելու նպատակով աշխարհի տարբեր երկրներում ծվարած նախկին երուսաղեմաբնակ հայերը որոշել են այս եւ հաջորդ տարվա ընթացքում համաշխարհային հավաք կազմակերպել Երուսաղեմում, գրում է Արթուր Հակոբյանը «Արմինյն միրոր սփեբեյթր» շաբաթաթերթի մարտի 29-ի համարում:

Նրանց մեծ մասը, գալով Հյուսիսային Ամերիկայից եւ Ավստրալիայից, առաջին անգամ հավաքվելու է ադրիի վերջերին՝ Սբ. Զատկվա տոնակատարությունների օրերին: Երուսաղեմում Զատիկը հին տոմարով ավելի ուշ են տոնում, քան արեւմտյան երկրները: Նրանք դրանով դրականորեն են արձագանքում տարիներ առաջ Թորգոմ արք. Մանուկյանի «Եկեք Երուսաղեմ» կոչին, որի նպատակն է ոչ միայն կարերն ամրապնդել սփյուռքի հետ, այլեւ վերակենդանացնել տեղի հայկական համայնքը, որն իր կարելին անում է գոյությունը պահպանելու երկրի բաղմական թոհուբոհի պայմաններում:

Նախատեսվում է ամեն հարմարություններով մի հյուրանոց-հանրակացարան կառուցել պատրիարքարանի մոտակայքում հայ ուխտավորներին տեղավորելու համար: Շատ բան է փոխվել, անուշ, երկրում: Գաղութը նոսրացել է: Բազում կենցաղային, առօրյա երեւույթներ անհետացել են: Հայկական ակումբը, ըստ «խաղաքաղաքի» (տեղացի) հայերի, դարձել էր իրենց երկրորդ տունը, այժմ «ամայացած խաղաք» է հիշեցնում: «Քաղաքացի» հայերի նախաձեռնությամբ www.«kaghakatzi».org կայքէջում հետաքրքրվողները կարող են իրենց ընտանեկան ծառի մանրամասնություններին ծանոթանալ:

Ի դեմ, այդ կայքի տվյալներով, ըստ Արթուր Հակոբյանի, հակառակ որոշ մութ ուժերի արգելքների, «խաղաքաղաքցիները» երկու պատրիարք են տվել Սբ. Հակոբի գահին, որոնցից մեկը Կիրակոս Մնացականյանն է եղել, մյուսը՝ Հարություն Վեհաթեսյանը: Պատրիարքարանի արխիվներում Կիրակոսի ազգանունը նշված չէ, սակայն բանասեր Հայկ Գրիգորյանի ջանքերով պարզվել է, որ նա Մնացականյան է եղել: Կիրակոսի եղբոր հետնորդներից լոնդոնաբնակ դաստաու Աբրահամ Մնացականյանը հաստատել է այդ վարկածը: Կիրակոսը ծնվել է 1783-ին եւ քահանա է ձեռնադրվել 1807-ին, եպիսկոպոս՝ 1815-ին եւ պատրիարք՝ 1847-ին: Մահացել է 1850-ին, կասկածելի հանգամանքներում:

Հարությունը մահմեդական տղա է եղել, որին Կիրակոսը եգիպտոսում գտնված ժամանակ (1825-34 թթ.) կոնստանդին է արել եւ տվել Հարություն անունը: Ծնվել է 1819-ին, քահանա է ձեռնադրվել 1850-ին, եպիսկոպոս՝ 1860-ին, պատրիարք՝ 1886-1889 թվերին:

Հավաքին մասնակցող նախկին երուսաղեմահայերը նման հետաքրքրական տեղեկություններից բացի, հավանաբար շատ այլ հաճելի հիշողություններ կունենան իրար պատմելու, եզրակացնում է հոդվածի հեղինակը:

Հ. ՕՇԱԿԱՆ

Երկար սպասված երկքաղաքացիությունը՝ իրականություն

«Հայ եղողը միայն Հայաստանի հողին վրայ է, որ կը ճանչնայ թէ՛ իմ՛զինքը եւ թէ Ազգն ու Հայրենիքը»:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԳԱՅԱՐԻԱՆ

Աշխարհով մեկ սփռված հայերի վաղեմի երազանքներից է սանալ ՀՀ քաղաքացիություն կամ երկքաղաքացիություն: Այդ երկուսն էլ այսօր արդեն դուրս են երազանքի ոլորտից ու դարձել են իրականություն: ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ալվինա Զաքարյանի սեղանին այսօր արդեն կա երկու հաստատիր գրանցագրված, որտեղ գծեցված են մեր այն հայրենակիցների լուսանկարներն ու տվյալները, որոնց 1997-ից առ այսօր ՀՀ նախագահի հրամանագրով շնորհվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Ուշագրավ է, որ այդ գրանցամատյանում առաջին գրառումը 1997-ի մայիսի 26-ին կատարել է առաջին երջանիկ ՀՀ քաղաքացի՝ Բախչեջյան Սեդա Սեւանը: Վերջինս իր երախտագիտությունն է հայտնել, թողնելով հետեւյալ գիրը. «Իմ եւ ամբողջ հայ ազգի Տերն եմ այսօրվանից: Սեդա Սեւան»: ՀՀ քաղաքացիություն ստացածների թվում են նաեւ Վարդան Օսկանյանը, Շահե արեթիսկոպոս Ամեճյանը եւ շատ ու շատ հայորդիներ, որոնց հաճար ՀՀ քաղաքացիության անձնագիր ստանալու երազանքը «տոն է այսօր հոգիս մեջ», դարձել է անջնջելի: Տկն Զաքարյանի հետ զրույցից տեղեկացա, որ շատ տուսով այդ գրանցամատյանները կիսանձնվեն Մատենադարանին ի պահ:

«Ազգի» զրույցը տկն Զաքարյանի հետ շարունակվեց երկքաղաքացիության շուրջ, որը մեր թերթի ընթերցողների խնդրանքով ներկայացնում ենք սեղմ:

2007-ի փետրվարի 26-ին ընդունված «ՀՀ քաղաքացիության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 13-1 հոդվածով ամրագրվեց նաեւ երկքաղաքացիությունը: ՀՀ քաղաքացիություն չունեցող, 18 տարին լրացած եւ գործունակ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու ՀՀ քաղաքացիություն ստանալու համար: Ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն ստանում են պարզեցված կարգով: ՀՀ երկքաղաքացի ՀՀ-ում ճանաչվում է միայն որպես ՀՀ քաղաքացի, եւ ունի բոլոր այն իրավունքները ու կրում է դրանց համար նախատեսված բոլոր պարտականությունները, ինչը ՀՀ քաղաքացի: «ՀՀ զինապարտության մասին» ՀՀ օրենքում երկքաղաքացիների զինապարտության մասով կատարվել է լրացում, ըստ որի, ՀՀ քաղաքացիություն ընդունած այլ պետության քաղաքացի տղամարդը ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից, եթե մինչեւ ՀՀ քաղաքացիությունն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային զինվորական ծառայություն, բացառությամբ ՀՀ կառավարության սահմանած պետությունների: Այլ պետության քաղաքացիություն ընդունած ՀՀ քաղաքացին չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից՝ ծառայել է նա այլ պետությունում, թե՛ ոչ: Երկքաղաքացին չի ազատվում զորահավաքից եւ վարժական հավաքից: Ավելի մանրամասն տեղեկություններ ՀՀ օրենքների մասին կարելի է ստանալ նաեւ «Internet» համակարգչային ցանցից:

ՀՀ քաղաքացիություն հայցող անձինքն, ովքեր բնակվում են Հայաստանում, կարող են դիմել ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների

վարչություն, իսկ օտարերկրյա պետություններում՝ ՀՀ դեսպանություններ կամ հյուպատոսական հիմնարկներ:

Այժմ մեր ընթերցողներին տեղեկացնենք, թե ՀՀ քաղաքացիություն ստանալու համար ինչ անհրաժեշտ փաստաթղթեր են հարկավոր՝ 1. դիմում, 2. ինքնակենսագրություն, 3. անձնագիր եւ դրա պատճենը, 4. 35x45 մմ չափի 6 լուսանկար, 5. տեղեկանք առողջական վիճակի մասին, 6. տեղեկանք դատվածության մասին այն երկրից, որտեղ վերջին 10 տարվա ընթացքում մշտապես կամ առավելապես բնակվել է, 7. աշխատանքային գործունեության մասին փաստաթուղթ, 8. ծննդյան վկայականը եւ դրա պատճենը, 9. ամուսնության վկայականը եւ դրա պատճենը, 10. ամուսնու անձնագիրը եւ դրա պատճենը կամ տեղեկանք ամուսնու քաղաքացիության մասին, 11. իր երեխայի ծննդյան վկայականը եւ դրա պատճենը, կամ ՀՀ-ում քաղաքացիությունը հաստատող վկայականը եւ դրա պատճենը, կամ ՀՀ քաղաքացու անձնագիրը եւ դրա պատճենը, 12. հայկական ծագումը հաստատող փաստաթուղթ՝ ծնողի (հոր կամ մոր, պապի կամ տատի, կամ քրոջ կամ եղբոր) ծննդյան վկայականը եւ դրա պատճենը, կամ ազգությունը հաստատող այլ փաստաթուղթ՝ մկրտության վկայական, 13. տեղեկանք վերջին 3 տարվա ընթացքում ՀՀ-ում մշտապես բնակվելու մասին, 14. քաղաքացիություն չունեցող անձինք կացության վկայականը եւ դրա պատճենը կամ ճամփորդական փաստաթուղթը եւ ՀՀ-ում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը եւ դրանց պատճենները: Նշված փաստաթղթերը հանձնելու պահին, անձին տրվում է հարցաթերթիկ, ՀՀ Սահմանադրության իմացության սուգաքննություն թեստ 30 տարբեր հարցերից կազմված: Թեստը անձը կարող է անել իր հետ, պատրաստվել, բացատրում էր տկն Զաքարյանը, որով սուգվում է տվյալ անձի ՀՀ Սահմանադրության իմացությունը, եւ երբ կանչվում է քննության, այդ ընթացքում լրացնում է թեստը: Եթե թեստի 30 հարցից 16 եւ գումարած մեկ միավոր անձը չի հավաքում, ապա արդյունքը համարվում է բացասական ու միայն մեկ տարի հետո կրկին կարող է դիմել: Նշենք նաեւ, որ ՀՀ կառավարության որոշմամբ, հաստատվել է նաեւ հայոց լեզվի իմացության կարգը, եւ այդ աշխատանքները կանոնակարգելու համար ԱՎ վարչությունում ստեղծվել է հանձնաժողով: 2007-ի սեպտեմբերի 20-ին ՀՀ կառավարության N1110-Ն որոշմամբ ՀՀ այն քաղաքացիները, ովքեր 1995-ի հունվարի 1-ից հետո առանց սահմանված կարգի ՀՀ քաղաքացիությունը չեղյալ հայտարարելու մասին էին բերել այլ պետության քաղաքացիություն, վերը նշված որոշումը ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում դրա մասին անձամբ կամ փոստով պետք է հայտնեն ԱՎ վարչություն, կամ ըստ բնակության վայրի տարածային ոստիկանության ստորաբաժանում, իսկ օտարերկրյա պետություններում գործող դիպլոմատիկական ծառայության մարմիններին:

ԱՎ վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ալվինա Զաքարյանը տեղեկացրեց, որ ՀՀ քաղաքացիություն ստանալու, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու համար փաստաթղթերի ցանկը ստանալուց բացի, անձը ՀՀ-ում մուծում է 1000 դրամ՝ քաղաքացիություն ստանալու, 1000 դրամ պետական՝ անձնագրի համար եւ 5000 դրամ՝ անձնագիրը օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին կնիքման համար, պետբյուջեի հաշվին արվում է մուծում (ինքդ տարվա համար):

Երկքաղաքացիության մասին օրենքի կիրառման օրվանից առ այսօր ՀՀ նախագահի հրամանագրով ՀՀ երկքաղաքացի են դարձել 146 քաղաքացիներ, իսկ 1415 քաղաքացիներ, որոնք այլ պետության քաղաքացիություն են ձեռք բերել առանց ՀՀ քաղաքացիությունից սահմանված կարգով հրաժարվելու, իրենց դիմումի հանձայն ճանաչվել են ՀՀ երկքաղաքացիներ: Մինչեւ այժմ երկքաղաքացիություն ձեռք բերած անձանց մեծ մասը Ռուսաստանի Դաշնության եւ Վրաստանի քաղաքացիներ են: Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց, թեստի ու լեզվի քննություն հանձնելուց հետո, ինչպես նախատեսում է օրենքը, մեկ տարի ժամկետում ձեւակերպվում եւ շնորհվում է քաղաքացիություն: Դիմումի մերժման դեպքում կրկին կարելի է դիմել մերժման օրվանից մեկ տարի հետո, օրենքով սահմանված կարգով: Իսկ անհամաձայնության ու դժգոհության դեպքում կարելի է հարցը վիճարկել դատական կարգով:

ՄԱՐԻՈՆԱ ՄԱՐՏԻՆՅԱՆ

Ամերիկացիները չեն հեռանալու Իրաքից

Այդ է վկայում հրապարակված գաղտնի փաստաթուղթը

Լոնդոնի «Գարդիան» թերթի տրամադրության տակ է հայտնվել Իրաքում ամերիկյան զորքի ներկայության հեռանկարներին վերաբերող համաձայնագրի գաղտնի նախագիծը, որը այդ երկում ամերիկացիների անժամկետ ռազմական ներկայության կես է ամրագրում:

Փաստաթղթում դա կոչվում է մնալու «ժամանակավոր» թույլտվություն: Նաեւ նշվում է, որ ԱՄՆ-ը «չի ձգտում մշտական ռազմակայաններ ստեղծել կամ մշտական ռազմական ներկայություն ունենալ Իրաքում»: Սակայն ԱՄՆ-ի եւ կոալիցիոն ուժերի, այդ թվում՝ բրիտանացիների ներկայության ժամանակային սահմանափակումների բացակայությունը նշանակում է, որ տվյալ համաձայնագիրը լուծ դիմադրության է բախվել ինչպես Իրաքում, այնպես էլ ԱՄՆ-ում:

Իրաքցի ինքնայաստները նշում են, որ փաստաթուղթը սահմանափակումներ չի դրադրում ամերիկյան զորքի թվակազմի, զինտեխնիկայի, զինտեխնիկների օրինական կարգավիճակի կամ իրավունքների նկատմամբ նրանց լիազորությունների վերաբերյալ:

ԱՄՆ դեսպանության նախարար Ռոբերտ Գեյթսը փետրվարին հայտարարել էր, որ սեռագրվելիք համաձայնագիրը նման կլինի ամբողջ աշխարհում ԱՄՆ-ի կնքած տասնյակ մյուս համաձայնագրերին եւ ամերիկացիներին չի դարձավորելու զինվորական գործողություններ: Սակայն դեմոկրատ կոնգրեսականները, այդ թվում՝ Սենատի զինված ուժերի կոմիտեի անդամ Էդվարդ Քենեդին, պնդում են, որ տվյալ համաձայնագիրը դուրս է գալիս համանման փաստաթղթերի շրջանակներից եւ ըստ սահմանադրության պետք է վավերացվի Սենատում:

Նկատի առնելով ԱՄՆ-ի եւ Իրաքի լարված հարաբերությունները եւ Իրանի սերտ կապերն Իրաքի վարչակազմի շիա կուսակցությունների հետ, անհրաժեշտ է մասնաճյուղել համաձայնագրի նախագծի այն կետը, որ «ԱՄՆ-ը չի ձգտում Իրաքի տարածքն օգտագործել ուրիշ պետությունների վրա հարձակվելու նպատակով»:

Ի դեմ, Իրաքում ամերիկյան զորքի հրամանատար Դեյվիդ Պետրեուսը եւ Բաղդադում ԱՄՆ դեսպան Ռայան Կրոկերն այսօր Կոնգրեսին հանձնառարակներ կներկայացնեն Իրաքից զորքերի հետագա դուրսբերման անհրաժեշտությանն վերաբերյալ, հաղորդում է Ֆրանսիրեսը:

Ներկայումս թե՛ Պետրեուսը եւ թե՛ դեսպանության նախարար Ռոբերտ Գեյթսը հանդես են գալիս զորքի դուրսբերման գործընթացում 6-8 շաբաթվա դադար տալու օգտին: Նրանց կարծիքով, դա անհրաժեշտ է Իրաքի իրադրության նոր զարգացումները դարձելու եւ զորքի թվակազմի կրճատման դադարները սահմանելու համար:

Ամերիկացի դիտորդներ անձնական այս տարի օտարերկրյա ռազմական ներկայության կրճատումը հնարավոր է այդ երկրի իրադրության կայունության դեմքում:

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՆՔ

Առողջության համաշխարհային կազմակերպության հայտարարությունը

Կլիմայի փոփոխություններն ակնհայտ են, եւ դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա արդեն նկատելի եւ զգալի է: Այդ դեպքերով էլ ապրիլի 7-ին՝ Առողջապահության համաշխարհային օրվա առթիվ «Առողջապահության համաշխարհային կազմակերպության» (ԱՀԿ) այս տարվա ընտրած թեման եղել են հենց այդ փոփոխությունները եւ դրանց ազդեցությունը: ԱՀԿ-ն դրանով ցանկանում է հաղորդագրության ուշադրությունը հրավիրել այդ հույժ կարեւոր խնդրի վրա, շեշտելով հատկապես այն փաստը, որ չնայած եղանակի այդ փոփոխությունները գլոբալ երեւույթներ են, հետեւանքները բոլոր երկրներում հավասար չափով չեն տեղաբաշխվում: Զարգացող երկրների ու փոքրիկ կղզիների բնակիչներն առավել շատ են տուժում դրանցից:

ԱՀԿ-ն հինգ գլխավոր հետեւանքներ է առանձնացնում.

ա) Երաշտն ու ջրհեղեղը կարող են անմիջականորեն վնասել սննդի բավարար ապահովումը: Թերասնումն իր հերթին բացասական կանդրադառնա մարդու առողջության վրա: Մոտավոր հաշվարկներով թերսնուցումից տարեկան 3,5 միլիոն մարդ է մահանում:

բ) Եղանակի կտրուկ փոփոխությունները՝ քամիները, ջրհեղեղները, ցնցահողերը եւ մյուս աղետները մարդկանց մահվան, վնասվածքների եւ հիվանդությունների թվերն ավելացնում են անասելի չափերով:

գ) Ձրի ե՛ւ պակասությունը, ե՛ւ առատությունը վնասակար են մարդու առողջությանը, կարող են լուծ առաջացնել, հատկապես վատ կամ փչացած սննդի օգտագործման պայմաններում: Իսկ լուծը, ըստ ուսումնասիրությունների, երեխաների մահացածության երկրորդ վտանգավոր հիվանդությունն է: Դրանից տարեկան մահանում է 1-8 միլիոն մարդ:

դ) Տաք քամիներն անմիջական պատճառ կարող են դառնալ ընկճվածության եւ ծայրահեղ դեպքերում նաեւ մահացածության՝ հատկապես մեծահասակների շրջանում, որովհետեւ սրտի կամ շնչառական օրգանների հիվանդություններից կարող են տառապել:

ե) եվ վերջապես՝ եղակի փոփոխություններն ազդում են նաեւ կենդանիների, հատկապես վարակի միջոցների «ախտահարության» վրա: Նոսրամ մի տեղից մյուսը տեղափոխվելով, մալարիայի կամ արեւադարձային տենդի նման հիվանդությունները տարածում են մարդկանց շրջանում:

«Հաշվի առնելով այս խնդիրները դիմակայելու դժվարությունները, հատկապես զարգացող երկրներում, պահանջում եմ ԱՀԿ-ի ջանքերի առավել նպատակասլաց օգտագործում, առավել արդյունավետ մարտավարությունների մշակում, առավել կատարելագործված հսկողության եւ կանխատեսման համակարգերի ստեղծում եւ առավել լայն իրազեկության ապահովում», ավարտվում է այս առթիվ հրապարակված ԱՀԿ-ի ժնեւի գրասենյակի գլխավոր տնօրենի շրջաբերականը:

Հ. Ս.

Դատարանը վճռեց, որ լեդի Դիանայի մահը «չկանխամտածված սպանություն» է

Լոնդոնի երդվյալների դատարանը եզրակացրել է, որ 1997-ի օգոստոսի 31-ին իշխանուհի Դիանան եւ նրա ընկեր Դոդի ալ Ֆայեդը Փարիզում զոհվել են «անզգուշության հետեւանքով», դառնալով «չկանխամտածված սպանության» զոհեր:

Երդվյալները վճռել են, որ ակամա մարդասպաններն են եղել լեդի Դիանայի ավտոմեքենայի վարորդ Անրի Պոլը եւ ավտոմեքենան հետապնդած անհատ լուսանկարիչները: BBC-ն հաղորդում է, որ կես տարի տեւած դատավարությունից հետո լոնդոնյան դատարանն այս եզրակացությունն է հանգել ապրիլի 7-ին:

Երդվյալները նշել են, որ ավտովթարի պահին վարորդ Անրի Պոլը եղել է անսթափ վիճակում, իսկ անհատ լուսանկարիչներն իրենց գործողություններով խանգարել են երթեւեկությանը:

«Մեյ նյուզ» հեռուստաընկերությունը հաղորդում է, որ Դոդի ալ Ֆայեդի հայրը՝ լոնդոնաբնակ եգիպտացի միլիարդատեր Մուհամմեդ ալ Ֆայեդը իր անհամաձայնությունն է արտահայտել դատավճռի կապակցությամբ: Նա հայտարարել է, որ «հիասթափված է» երդվյալների դատավճռից եւ հավանաբար կդիմանցի անցկացնել գործի նոր քննություն:

«Դատավճիռը հարված է աշխարհի միլիոնավոր մարդկանց, որոնք պատասխանում էին իմ պայքարը», ասել է Մուհամմեդ ալ Ֆայեդը:

Եգիպտացի միլիարդատիրոջ խոսքերով, քննությունը պարզել է, որ «վթարն առաջացրել են ոչ միայն անհատ լուսանկարիչները, այլեւ նրանց հետեւից ընթացած անհայտ ավտոմեքենաները»: Նրա կարծիքով, էլիզաբեթ Բ թագուհին եւ իշխան Ֆիլիպը ունեն «միայն իրենց հայտնի կարեւոր տեղեկություններ», բայց «նրանց անգամ դատարան չկանչեցին, թեեւ դա անհրաժեշտ էր»:

Մուհամմեդ ալ Ֆայեդն ընդգծել է, որ «ոչ ոք չպետք է օրենքից բարձր դասվի»:

Ինչ վերաբերում է լեդի Դիանայի որդիներին՝ իշխաններ Ուիլյամին եւ Հարրիին, նրանք ապրիլի 7-ին համատեղ հայտարարությամբ հավանություն են տվել երդվյալների դատավճռին: «Մենք համաձայն ենք երդվյալների դատավճռին: Երկուսս էլ նրանց անչափ երախտապարտ ենք իրենց դրսեւորած համբերատարության համար, չնայած վերջին վեց ամիսների նրանց կյանքի անհարմարությունների», ասվում է հայտարարության մեջ:

Ուիլյամը եւ Հարրին շնորհակալություն են հայտնել լսումների ժամանակ հանդես եկած բոլոր վկաներին եւ հատկապես ավտովթարից հետո ողջ մնացած թիկնապահ Թրեւոր Ռիզին:

Ռուսաստանում վաճառքի կհանվի հակահաղցկեղային դեղավասանյութ

Ռուսաստանը կդառնա աշխարհի առաջին երկիրը, որտեղ հակահաղցկեղային դեղավասանյութ է վաճառվում: Ամերիկյան Antigenics դեղագործական փոքր ընկերությունը երեկ հայտարարեց, որ ՌԴ իշխանությունները հավանություն են տվել իր Oncophage դեղատոմսերի վաճառքին: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ սա առաջին դեպքն է, երբ Ռուսաստանում հավանություն են տալիս արտադրող երկրում փորձարկումներ չանցած դեղամիջոցի վաճառքին: ԱՄՆ-ում Antigenics-ի փորձարկումներն անավարտ են մնացել:

Antigenics-ի հայտարարության մեջ նշվում է, որ ընկերությունն ակնկալում է եվրոպական երկրների իշխանությունների հավանությունը սանձել մինչեւ տարեվերջ, իսկ Ռուսաստանի տարածքում դեղատոմսերի վաճառքի կհանվի արդեն ամռանը:

Oncophage-ը փորձարկվել է որպես երիկամի քաղցկեղի կրկնության առաջարկվող դեղամիջոց: Այն չի օգտագործվում բուն հիվանդության կանխարգելման համար:

Կլինիկական հետազոտությունների 3-րդ փուլի տվյալների համաձայն, Oncophage-ի կիրառությունը թույլ է տալիս 45 տոկոսով երկարացնել հիվանդության կրկնության նշաններ չունեցող հիվանդների կյանքի տեւողությունը: Ներկայումս ուսումնասիրվում է ուղեղի քաղցկեղի բուժման համար դեղավասանյութի կիրառման հնարավորությունը:

Ռոյթերի տվյալներով, Ռուսաստանում ամեն տարի արձանագրվում է երիկամի քաղցկեղի 16 հազար նոր դեպք: Antigenics ֆիրմայի ղեկավար Կարո Արմենը ասում է, որ դեղավասանյութը կարող է առատությամբ լինել հիվանդների 1/4-ի համար: Նա ընկալի ծավալը գնահատել է 200 մլն դոլար, իսկ Oncophage-ի վաճառքի հեռանկարները՝ «չափավոր»:

Իսրայելցի նախարարն սպառնում է ոչնչացնել Իրանը

Իսրայելի ենթակառույցների նախարար Բենիամին Էլիեզերը սպառնացել է երկրի երեսից ջնջել Իրանը, եթե նա հարձակվի հրեական պետության վրա: «Իրանը չի համարձակվի հարձակվել, քանզի հասկանում է, որ նման քայլը կառաջացնի Իսրայելի կողմ հակազդեցությանը, որը կհանգեցնի իրանական պետության ոչնչացմանը», հայտարարել է իսրայելցի նախարարը, որի խոսքերը մեջբերում է «Ֆիգարո» թերթը:

Բենիամին Բեն Էլիեզերը իր ազդեցուն հայտարարությունն արել է Իսրայելում անցկացվող խորհրդարանական զորավարժությունների կապակցությամբ նախարարությունում կազմակերպված ժողովում:

«Իրանցիները գիտակցում են մեր ուժը, բայց շարունակում են հարձակումներ անել, զինելով իրենց դաշնակից Սիրիային եւ Հզբոլլահին»: Եվ մենք պարտավոր ենք հակադարձել», մասնավորապես հայտարարել է Բեն Էլիեզերը, որը պաշտոնող գեներալ է եւ անցյալում Իսրայելի պաշտպանության նախարար է եղել:

Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը իր պաշտոնավարման ընթացքում հանիցս հանդես է եկել Իսրայելն աշխարհի քարտեզի վրայից ջնջելու կոչերով: Իսրայելը Մերձավոր Արեւելքում միջուկային միակ տերությունն է եւ մյուս պետություններից պահանջում է խիստ պատժամիջոցներ կիրառել Իրանի դեմ, որպեսզի նա չկարողանա ատոմային զենք պատրաստել: Բայց Բենիամին Բեն Էլիեզերն իսրայելցի առաջին բարձրաստիճան պաշտոնյան է, որը փաստորեն անսող կերպով սպառնում է միջուկային զենք օգտագործել Իրանի դեմ:

Բուլղարական մաֆիայի մասին գրքեր գրած բուլղարացին սպանվել է

Կազմակերպված հանցավորության վերաբերյալ Բուլղարիայում գրքեր գրած Գեորգի Ստոեւը մահացել է երկուշաբթի օրը՝ գլխին հրազենից ստացած վերքից: BBC-ն հաղորդում է, որ 35-ամյա Ստոեւի վրա կրակել են մայրաքաղաք Սոֆիայի հյուսիսային թաղամասերից մեկի մոտ: Գրողին անմիջապես տեղափոխել են հիվանդանոց, բայց բժիշկներին չի հաջողվել փրկել նրա կյանքը:

Նախկին թիկնապահ Ստոեւը 1989-ին Բուլղարիայում սոցիալիստական վարչակարգի տապալումից հետո ձեւավորված բուլղարական մաֆիայի մասին գրքեր է գրել, անձամբ ծանոթ լինելով բուլղարական հանցախմբերի գործունեությանը: Տեղական լրատվամիջոցների տվյալների համաձայն, նա ինքը հանցախմբերից մեկի անդամներից է եղել: Ենթադրվում է, որ Ստոեւի սպանությունը կարող էին կազմակերպած լինել նրա նախկին զինակիցները:

Ավելի վաղ՝ երկուշաբթի օրը, դարձյալ Սոֆիայում գնդակահարվել էր հայտնի գործարար Բորիս Գեորգիեւը, որը Կոզլոդույի ատոմակայանը կառավարող ֆիրմայի ղեկավարն էր:

Ալեխս Ամիրյանի «Հույսի համիներ» Նյու Յորքի կինոփառատոնում

Եվրոպական մուսայբոխինգի կրկնակի չեմպիոն եւ ծայրահեղ յոգայի ջատագով Ալեխս Ամիրյանի «Հույսի համիներ» վավերագրական ֆիլմը մարտի սկզբներին հաջողությամբ ներկայացվել է Նյու Յորքի «Անկախ կինո եւ տեսաֆիլմերի միջազգային փառատոնում», որը կայացել է Մանհեթենի «Միքի սինեմազ վիլից իսթում», տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Քսանյոթ րոպեանոց ֆիլմը պատմում է ենթած օրից բազմաձեւ սկլերոզով տառապող Բաբաք անունով մի երիտասարդի մասին, որին Ալեխսը առաջնյան մարտարվեստի իր մեթոդներով վստահություն է ներշնչում եւ սովորեցնում ցավերը հաղթահարելով խլել եւ ինքնաիրացնել:

«Ես հավատում եմ, որ ցավը կարելի է ուղեղի միջոցով վերահսկել», ասում է 38-ամյա Ալեխսը, որ փորձ տարիում սովորել է Վլադիմիր Ենգիբարյանի դեկավարած բանգիամարտի դպրոցում: Այնուհետեւ Սանկտ Պետերբուրգում Ռուսաստանի նշանակության ուժերի «Ինքնապաշտպանություն առանց զենքի» ծրագրին է մասնակցել եւ հետեւել մուսայբոխինգի դասընթացներին: Ավարտել է Երեւանի պետհամալսարանը եւ դարձել մուսայբոխինգի ֆեդերացիայի նախագահ: Վերջին ութ տարիներին ապրում է Հյուսիսային Կարոլինայում, որտեղ «Ամիրյան մարտարվեստի ակադեմիայի» սեփականատերն է: Այնտեղ իր ուսանողներին սովորեցնում է մուսայբոխինգի, միքբոխինգի եւ ծայրահեղ յոգայի գաղտնիները:

Ֆիլմի նոթասակն է, ըստ նրա, ցույց տալ, որ հաշմանդամները հետեւողական պարապմունքների եւ կամքի դրսեւորման պայմաններում կարող են դառնալ հաստատակության լիարժեք անդամներ: «Բաբաքն այլեւս դեղեր չի օգտագործում, կարողանում է ազատ, առանց հենակների խլել, եւ կարում եմ, մի օր էլ նա կսկսի վազել ինքնուրույն», ասում է Ալեխսը, որը Բաբաքի հետ կանոնավոր պարապմունքներ է անցկացրել անցյալ օգոստոսից՝ նկատելով նրա մոտ հուսահատության նշույլներ, բայց նաեւ բնավորության ամուր գծեր:

Բացի Ամիրյանի ֆիլմից, այլ հայ վավերագրողների ֆիլմեր էլ ցուցադրվել են փառատոնի ժամանակ: Մեկը՝ Ծովինկ Թորիկյանի 15-րոպեանոց ժապավենը՝ «Բալա-Ուալա-Չի» վերնագրով՝ Բելգիայի գարեջրատներից մեկում կատարվող դեպքերի մասին է եւ Ավետիս Օհանյանի 45-րոպեանոց «Լոեցնողը» ֆիլմը Հայոց ցեղասպանության մասին:

Նյու Յորքի այս փառատոնը ծնունդ է առել 1993-ին եւ իր տեսակի մեջ մեծագույնն է աշխարհում:

Ամիրյանի մասին հավելյալ տեղեկություններ համար այցելել «Alexextremeworld.com» կայքէջը:

Հ. Օ.

Պապյանի ոսկե շայնը կիմայի լոսանջելեսցիներին

Երեւանում ծնված եւ միջազգային համբավի արժանացած երգչուհի Հասմիկ Պապյանը, որն աշխարհի պատկառելի բեմերում է հանդես եկել (Նյու Յորքի Մետրոպոլիտենում, Բասիլի Փարիզ օպերայում, Միլանի Լա Սկալայում) եւ հմայել հազարավոր ամերիկացիների, ֆրանսիացիների, իտալացիների եւ այլոց, այս անգամ, ըստ խմբագրության սացած հաղորդագրության, ելույթ է ունենալու Վիբիանա մայր տաճարում (Լոս Անջելես): Համերգին, որը տեղի է ունենալու ապրիլի 27-ին, նրան ընկերակցելու է տաղանդավոր դաշնակահար Ավո Գուլումջյանը, որը ներկայիս դասավանդում է Վիեննայի երաժշտական ակադեմիայում:

Մշակութային եզակի իրադարձության պրոդյուսերն է «ԻՆՖինիթ էֆ էնթերթեյնմենթ» ընկերությունը:

Հ. Օ.

Գույների ու հնչյունների միաձուլում «Նարեկացի» արվեստի միությունում

Ես հոգնել եմ անիմաստ լալից,
Ես թաղում եմ թախիծս այսօր,
Ես որոնում եմ
տանջանքներս անցած,
Եվ պատառոտում սիրտս թուչված:

Երիտասարդ նկարչուհի Հեղինե Ավդալյանն այս քառյակը հորինել է «Կյանքի խաղեր» նուագարանն ստեղծելու ընթացքում: Կյանքի իրական պատկերները, մարդկային կերպարներն արտացոլող կտավում փորձել է գտնել մարդկությանը հուզող ամենատարբեր հարցերի ու խնդիրների պատասխանը: Ֆիգուրներից յուրաքանչյուրն իր հետ նոր տրամադրություն է բերում: Ստեղծագործությունում զուգակցվում են ողբերգությունն ու կատակերգությունը, սերն ու դավաճանության գաղափարը, որոնք իրապես ստեղծում են կյանքի խաղեր:

Երեկ «Նարեկացի» արվեստի միության ցուցասրահում միանգամից երկու միջոցառում էր մեկ արվեստագետի մասնակցությամբ: Նախ՝ տեղի ունեցավ Հեղինե Ավդալյանի «Հոգու թռիչք» խորագիրը կրող գրաֆիկական աշխատանքների ու կոլաժների ցուցադրության բացումը: Իսկ նկարչուհու գործերն այլի էին ընկնում մի զարմանալի թռիչքով ու յուրահատուկ մտածելակերպով: Հանդիսատեսին ներկայացվեցին Հեղինե Ավդալյանի վերջին չորս տարվա աշխատանքները: «Երազի մյուս կողմը» ստեղծագործությունը հեղինակը համարում է իր լավագույն աշխատանքներից մեկը:

Այնուհետեւ համերգասրահում տեղի ունեցավ դասական երաժշտության համերգ: Հնչեցին Կոմիտասի, Շուման, Բրամսի երգերը: Հեղինեն նշում է, որ տեղի ունեցած միջոցառումն ու ջերմ ընդունելությունն իրեն տվեցին թեւեր՝ ավելի բարձր ծախրելու համար:

Նկարչական գործունեությունից զատ Հեղինեն սովորում է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: «Նկարչությունն ու երաժշտությունն անբաժան են եւ առանձին գոյատեւել չեն կարող: Նկարչությանն անհրաժեշտ է երաժշտություն, իսկ գույներին՝ հնչյուններ», գտնում է երաժիշտ նկարչուհին:

ՏԻԳՐԱՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Մեր ծանր մորմոքին՝ թեթեւ մտահոգություններ

«Հայաստ» կենտրոնի տնօրեն Ռիտա Շառոյանը «Ուրբաթ» ակումբում հանրային կյանքի վրա մշակութային ներազդեցության ուղիների մշակման փորձ էր անում: Իրենց կենտրոնը լուրջ արվեստ խառզելու հայտ է ներկայացնում, հիմնականում՝ ցուցահանդեսների ու ֆիլմերի տեսքով: Իսկ կա՞ արդյոք լուրջ արվեստի ընկալման պահանջ, թե՞ բթամտությունը առողջ, սթափ մտածողության արմատները ոչնչացրել է վերջնականապես, եւ առհասարակ փտած արմատների կամ խարխուլ ավերակների վրա ինչ լուրջ, հիմնավոր բան կառուցելու մասին է խոսք: Առաջարկվում էր ստեղծել մշակութային լրագրողական միություն կամ ակումբ, որ պարբերաբար կանդրադառնա հայկական մշակութային մթնոլորտի տեղեկատվությունների՝ վերահսկման, վերանայման գործառույթով: Իսկ ինչ արժեքային համակարգով, ինչ մտայնություն կրող մարդկանցո՞վ, ինչ մտահոգություն-լրջությամբ: Ակումբների ձեւավորման խնդիր է առաջադրվում հայ իրականության երկփեղկված ու հակոտնյա մտածողության այսօրյա ծանր իրականության ֆոնին: Ոիտա Շառոյանը հիշեց մեծն Թումանյանին, երբ բանաստեղծը սովիտակ դրոշ էր պարզում, կամ Մայր աթոռի պատերի տակ կուչ եկած որբ անուսնիներին պատերից ներս առաջնորդում:

Խոսվեց ինքնագործ արվեստի, դրա ծաղկման-բարգավաճման եւ պետականորեն հովանավորվելու մասին: Առաջարկվեց մասնագետներից բաղկացած խմբեր ստեղծել, որոնք հնարավոր է վերահսկեն, գեթ. խորհրդի դեր կատարեն: Ասենք՝ արվեստի ինքնագործունեությունը հասցեագրվի նրանց եւ կամ դրսեւորվի այն խավերի երջանկանում, որոնց դա բավարարում է, ինչպես, օրինակ՝ հանրային միտքը թունավորող այն երգն ու երաժշտությունը հեռուստակրանից հնչող, որոնց տեղը հարսանիքներ, կենցաղային միջոցառումներն են: Եվ կամ պետական մրցանակները չտրվեն ու մեդալներ չշնորհվեն նաեւ փողոցային հայհոյանքների չափածոյացված տիրաժավորման համար: Մշակութային այսպիսի խայտառակ ինքնագործունեությունը, ցաքր բնազդների այս անճաշակ տոնավաճառը, որ հոգեսպանդ է իրականացնում, կանխելու համար գաղափարական լուրջ խմորումներ, խմբավորումներ են պետք: Մինչդեռ, մշավորականներից շատերը, ինչպես Ռ. Շառոյանը վկայեց, ասում են, որ իրենք հաղթականությանը չեն խառնվում: Ու ծնվում է հարցադրում՝ հաղթականությո՞ւն է արդյոք այս օրերի հանրային տագնապի, մորմոքի հանդեպ մտահոգությունը, առաջարկը, իսկ անտարբերության քիթելի տակ սեփական մտքի անճարակությունը կամ շահառու մորթաբաշխության դիմակը՝ իրականությունից՝ իմա հաղթաթղթական դիրքորոշումից իբր արվեստի միջոցով փախուստ տալ չէ՞:

Եվս մեկ հարցադրում՝ կա՞ մշակութային հաղթականություն: Պետությունն է դրա իրականացնողը եւ ինչպե՞ս, ինչ միջոցներով է դա իրականացվում. հեռուստաընկերությունն՝ե՞ր, թերթե՞ր, ինչ են քարոզում դրանք: Ռ. Շառոյանն ասում էր, որ օրերս, ժամը 10.30-ին այնպիսի մի ֆիլմ էին ցուցադրում, որ ամբոխ չգիտեր հայացքը ուր փախցներ (սովորական պատմություն): Երեւանցի հեռուստադիտողներից շատերը գտել են դրա ելքը՝ բոյկոտել հայկական հեռուստաթերը, բայց որտե՞ղ: Սա ճանապա՞րհ է:

Եվ այսպես՝ շարունակվող մերօրյա ծանր վերին իջեցվող թեթեւ մտավարժանքներ...

Մ. Բ.

Չարենց հասկանալու համար

Երեկ յարենցյան ոգով էր ընչում Երեւանի հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի դահլիճը, ուր ուսանողական փոքր լսարանի, ՀՀ մշակույթի նախարարի եւ մի քանի մտավորականների դասին հանձնվեց «Եղիսե Չարենցը ռուս գրողների թարգմանությամբ» երկլեզու ժողովածուն: Բանաստեղծական գիտությունների թեկնածու Ցեմմա Բառնասյանի կազմած եւ խմբագրած այս ձեռնարկը գնահատեցին գրականության ինստիտուտի տնօրեն Ազատ Եղիազարյանը, Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, ուսանողներն ու համալսարանի ղեկավարությունը: Միջոցառման մանրամասները կարդացեք վաղվա **«Ազգում»**:

Ս. Մ.

Մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական 3-րդ մրցույթը՝ ապրիլ-մայիսին

Հայաստանում երգչախմբային արվեստի հարգության, զարգացման եւ տարածման, մանուկների եւ պատանիների գեղագիտական դաստիարակության ծնունդոնման, մանկապատանեկան երգչախմբի գործունեության խթանման նպատակով 2008-ի ապրիլ-մայիս ամիսներին կազմակերպվում է «Երգող Հայաստան» խորագրով մանկապատանեկան երգչախմբերի 3-րդ հանրապետական մրցույթ: Մրցույթի կազմակերպիչներն են՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, Երեւանի հարախոսեսարանը, Հայաստանի երաժշտական ընկերությունը եւ «Հայաստանի փոքրիկ երգիչներ» ասոցիացիան: Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել Հայաստանի, Արցախի եւ Ցանկերի հանրակրթական, երաժշտական եւ արվեստի դպրոցների 113 մանկապատանեկան երգչախմբեր: Երգչախմբերի միջեւ մրցույթը կանցկացվի 2 փուլով: Մարտի 11-25-ը հանրապետության մարզերում կմեկնարկի 1-ին փուլը: Երեւանում մայիսի 3-4-ը կանցկացվի մրցույթի 2-րդ փուլը: Իսկ մայիսի 11-ին, ժամը 14-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա գալա համերգը ու մրցանակների հանձնման արարողությունը: Մրցույթի մասնակից 113 երգչախմբերը նախարարությունից կստանան «Հայ կոմպոզիտորների մանկական խմբերգերի ժողովածու»-ն, որտեղ տեղ են գտել հայ կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունները: Ի դեմ ժողովածուն կազմել եւ հրատարակել է (պետպատվերի շրջանակներում) ՀԵԸ նախագահ, պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը:

Խորհրդանշական է, որ այդ օրերին, երբ մեկնարկելու է մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական մրցույթը, եվրոպական եւ միջազգային երգչախմբային ընտանիքին Հայաստանը անդամագրելու եւ վերջինների կողմից իրականացվող միջոցառումներին հայաստանյան երգչախմբերին ներգրավելու ուղղությամբ բանակցություններ վարելու նպատակով, ապրիլի 5-8-ը ՀՀ մշակույթի նախարարությունը հյուրընկալում է երգչախմբային արվեստի միջազգային ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Ժան Կլոդ Ուիլենսին եւ Եվրոպական ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Սոնյա Գրայներին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Լեւոն Արոնյան. «Գլխավորը երջանիկ լինելն է»

Chesspro.ru ինտերնետային կայքէջում ընդարձակ հարցազրույց է տպագրված Լեւոն Արոնյանի հետ: Հարցազրույցի առավել հետաքրքրական հատվածները ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:

- Շախմատում ինչպիսի՞ հաջողության կցանկանայիր հասնել, որ թոշակի գնալիս մտածեիր, թե շախմատային կյանքդ հաջողվել է:

- Նույնիսկ չգիտեմ: Երեւի թե մշտապես բոլորին հաղթի, ընդ որում՝ տարբեր ոճերով: Սակայն որեւէ գերագնահատելի շախմատի դերը, դա միայն կյանքի մի մասն է: Դժվար է պատկերացնել մի մարդու, նույնիսկ աշխարհի չեմպիոնի, որին շախմատը կատարյալ երջանկություն պարգեւած լինի: Իհարկե, եթե գեղեցիկ շատ պարտիաներ խաղացած լինեմ, գուցե դրանցով գոհ լինեմ:

- Մրցաշարերի ժամանակ շա՞տ ես լարվում:

- Մրցաշարեր կան, որոնցում հանգիստ ես խաղում, իսկ մյուսներում հարկ է լինում ուժերդ լարել: Այստեղ շատ բան տրամադրությունից է կախված: Ուզում եմ հասկանալ, թե ինչպիսի հոգեվիճակում եմ:

- Ինչպե՞ս է ձեւավորվել քո շախմատային աշխարհայացքը:

- Փոքր տարիքում մարզվել եմ Մելիխեթ Խաչիյանի մոտ, որն այժմ գրոսմայստեր է: Նա ինձ շատ բան է սովորեցրել: Հետագայում մոտ կես տարի աշխատել եմ Արշակ Պետրոսյանի հետ: Այդ կարճ ժամանակաընթացքում շատ բան իմացա, շախմատին այլ տեսանկյունով նայեցի:

- Հայ շախմատիստների ավագ սերունդը՝ Վահանյանը, Լոքուտյանը կամ Հակոբյանը չե՞ն նախանձում քեզ:

- Ոչ: Թե՛ Ռաֆայելը, թե՛ Վոլոն մշտապես աջակցել են ինձ: Մեզմ միասնական մեկ ընտանիք ենք: Նրանք ուրախանում էին հաջողություններովս, խորհուրդներ տալիս: Նման վերաբերմունքը ինձ լրացուցիչ ուժ էր հաղորդում:

- Բայց չէ՞ որ դու նրանց առաջատար դիրքերից զրկեցիր:

- Մեր թիմում միմյանց նկատմամբ նախանձի զգացում չի եղել: Յուրաքանչյուրը ձգտում էր, որ առաջին խաղատախտակի վրա ինձ լավ զգայի: Այլապես մեզմ օլիմպիական չեմպիոն չէինք դառնա: Ի դեմ, Հակոբյանի հետ այժմ էլ մի թիմում ենք խաղում, Վահանյանի հետ մեկ տարի հավասարանում խաղացել ենք:

- Անդրադառնանք կյանքում քո համար գլխավոր գերակայություններին:

- Առաջին տեղում, անկասկած, ընտանիքն է, ընկերները: Հայերս ընդհանրապես ընտանեկան ավանդույթները հարգող ենք: Թեեւ Գերմանիայում եմ բնակվում, սակայն հստակ գիտակցում եմ, թե ով եմ, որտեղից եմ առաստաղս:

- Պատմիր ընտանիքիդ մասին:

- Հայրս ֆիզիկոս է, այժմ վաստակած հանգստի մեջ է: Մայրս ինժեներ է: Գերմանիա տեղափոխվելով, այժմ անգործ է: Երբեմն իմ հետ մեկնում է մրցաշարերի: Ընդհանրապես, Բելգիայում գերդաստանով ենք բնակվում: Բացի ծնողներից, Գերմանիայում են քրոջս ընտանիքը, հորս եւ մորս հարազատները:

- Եվ նրանց ամբողջ հոգսը քո վրա՞ է:

- Շախմատից ստացվող եկամուտներս բավականացնում են, բացի այդ, նրանք էլ ձեռքերը ծալած չեն նստում: Ինձ հարուստ չեմ համարում, սակայն կարող եմ թույլ տալ հաճախել ռեստորան կամ հագնել: Պրոֆեսիոնալ շախմատիստը հացը վաստակում է դժվարին աշխատանքով: Վարձատրությունից չեմ դժգոհում: Սակայն շատերը գտնում են, որ մեզմ ոչինչ չենք անում: Ինձ համար անհասկանալի է, թե ինչու շախմատիստները պետք է ավելի քիչ գումար ստանան, քան ասենք դերասանները:

- Գերմանիայում շախմատի մասնագիտությունը հարգանքի է արժանի: Դու այնտեղ քեզ փախստականի կարգավիճակում չե՞ս զգում:

- Ծնողներիս հետ 2001-ին եմ մեկնել Գերմանիա: Ինձ լավ եմ զգում, սակայն դա իմ հայրենիքը չէ: Չնայած հենց Գերմանիայում եմ հնարավորություն ունեցել բարձր մակարդակով շախմատ խաղալու:

- Գոնե հասցրե՞լ ես գերմաներեն սովորել:

- Առօրյա կյանքում կարողանում եմ բացատրվել, ինձ հասկանում են: Վերջին ժամանակներս ավելի շատ անգլերեն եմ գործածում. ընկերուհիս Ավստրալիայից է եւ առայժմ չի շտապում ռուսերեն կամ հայերեն սովորել:

- Ծնվել եւ մեծացել ես Երեւանում: Չե՞ս կարոտում հարազատ քաղաքդ:

- Կարոտում եմ եւ աշխատում եմ կարոտս առնել: Չեմ կարող ճշգրիտ որոշել, թե վերջին տարիներին որքան եմ ավելի շատ գտնվել՝ Երեւանո՞ւմ, թե Բելգիայում: Ամեն դեպքում շախմատային լուրջ պարապմունքներս անցկացնում եմ հիմնականում Հայաստանում: Այնտեղ շախմատից բացի, շատ ընկերներ ունեմ: Ամեն անգամ Հայաստան ժամանելիս զգում եմ, թե նրանք որքան քանկ են ինձ համար: Յուրաքանչյուր օր անցնում է շատ արագ: Դա ինձ լիցք է հաղորդում:

- Երբեւէ չե՞ս մտածել, թե ի՞նչ կլիներ, եթե շախմատով չզբաղվեիր:

- Փոքր տարիքում երաժշտությամբ եմ զբաղվել, նվագում էի դաշնամուր: Շատ հետաքրքրություններ եմ ունեցել, որոնք լուրջ չեն եղել: Հայրս ցանկանում էր, որ իր հետքերով գնամ, ֆիզիկոս դառնամ: Կասեմ չեմ, որ դա ինձ դուր կգար: Ամեն դեպքում, երեւի մասնավոր գործունեությամբ կզբաղվեի:

- Մտածո՞ւմ ես ընտանիք կազմելու մասին:

- Առայժմ ոչ: Շատ ժամանակ եւ ուժեր է խլում շախմատը: Փառք Աստծո, առայժմ ամեն ինչ նորմալ է:

- Կարո՞ղ ես քեզ երջանիկ մարդ համարել, որն ամեն ինչ ունի:

- Որոշ առումով այո: Չեմ ուզում այրով տալ, բայց հուսով եմ, որ ապագայում կյանքս ավելի կնմանվի իմ պատկերացմամբ իդեալականին: Կարեւորը երջանիկ լինելն է:

Առաջին պատոնանկությունը

Նոր մրցաշրջանում Հայաստանում գրանցվեց մարզական առաջին փոփոխությունը: Բարձրագույն խմբի առաջնության մեկնարկի շեմին «Բանանցի» գլխավոր մարզի պատոնը ստանձնել է բուլղարացի մեկ այլ մասնագետ՝ Նեդելչո Մաուուեւը, որն օգնում էր Նիկոլայ Կոստովին: Վերջինս ընդունել է Դոնեցկի «Մեթալուրգ» հրավերը եւ ստանձնել այդ թիմի գլխավոր մարզչի պատոնը: Հիշեցնենք, որ «Մեթալուրգում» են ներկայում հանդես գալիս «Բանանցի» ֆուտբոլիստներ Սամվել Մելիոնյանն ու Առարատ Առաքելյանը: Հարկ է նշել, որ վերջին տարիներին «Բանանցի» գլխավոր մարզիչները հաճախակի են փոխվում: Բուլղարացի Նիկոլայ Կոստովը անցած մրցաշրջանի կեսերին էր գլխավորել «Բանանցը»՝ փոխարինելով չեխ Յան Պոտուլկային:

Ժամանակին Մաուուեւը հանդես է եկել Բուրգասի «Նեֆտեխիմիկում» եւ Սոֆիայի «Սլավիայում»: 1995-ից անցել է մարզական աշխատանքի սկզբում որպես «Նեֆտեխիմիկի» փոխարինող կազմի գլխավոր մարզիչ, ապա Բուրգասի «Զեռնոմորեցի» գլխավոր մարզիչ: Այնուհետեւ գլխավորել է «Նաֆտեխը»: Նաեւ աշխատել է Բուլղարիայի երիտասարդական հավաքականի գլխավոր մարզչի օգնական, ինչպես նաեւ գլխավորել է երկրի մինչեւ 19 տարեկանների պատանեական հավաքականը: Ընթացիկ մրցաշրջանում «Բանանցի» առջեւ խնդիր է դրված պայքարել չեմպիոնության եւ երկրի գավաթի համար:

Գալուս Պետրոսյանն էլ մեկնեց Բելառուս

Կարճ ժամանակով վերադառնալով հարազատ կոլեկտիվ եւ «Փյունիկ» կազմում մասնակցելով գավաթային հանդիպումներին, Գալուս Պետրոսյանը կրկին մեկնեց արտերկիր: Նա մեկ տարով պայմանագիր է կնքել բելառուսական «Սմորգոն» թիմի հետ: Գալուս Պետրոսյանը դարձավ հայաստանցի 5-րդ ֆուտբոլիստը, որ նոր մրցաշրջանի շեմին ընդգրկվել է բելառուսական ակումբում: Ավելի վաղ «Գոմելի» հետ պայմանագիր էին կնքել «Փյունիկի» խաղացողներ Արվան Մկրտչյանն ու Արմեն Տիգրանյանը, իսկ «Վիտեբսկում» ընդգրկվել էին Արթուր Ոսկանյանն ու Ալեքսանդր Թադեւոսյանը:

ԲՈԼՈՐՏՈՒՄԻՑ

Ֆելիքս Շտուրմը մարտահրավեր է նետում Աբրահամին

Միջին քաշում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն, 29-ամյա գերմանացի բոքսիամարտիկ Ֆելիքս Շտուրմը, որ անցած շաբաթ վստահ հաղթանակ էր տոնել ավստրալացի Ջեմի Պիսմենի նկատմամբ, ցանկություն է հայտնել առաջիկայում մենամարտել IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոն Արթուր Աբրահամի, ինչպես նաեւ WBC-ի եւ WBO-ի վարկածներով չեմպիոնական գոտիների տեր Կելի Պավլիկի հետ:

Շտուրմի պրոմոութեր Կլաուս Պիտեր Կոլը հայտարարել է, որ իրենք պատրաստ են չեմպիոնական տիտղոսների միավորման համար կայանալիք մենամարտերին: Ֆելիքս Շտուրմը բավական ինքնավստահ է եւ բարձրագոչ հայտարարություն է արել Արթուր Աբրահամի հետ հնարավոր մենամարտի եզրի վերաբերյալ. «Ես վստահ եմ ուժերիս եւ եթե մենք նույնիսկ 24 ռաունդ մենամարտենք, ապա կրկին կհաղթեմ Աբրահամին: Ես մշտապես կարող եմ հաղթել նրան: Նա միայն մեկ լավ հատկանիշ ունի՝ ծանր հարվածը»:

Հարկ է նշել, որ մինչեւ Աբրահամ-Շտուրմ մենամարտը, երկու բոքսիամարտիկներին էլ հարկ կլինի պատասխանել իրենց տիտղոսները: Արթուր Աբրահամը հունիսի 21-ին ԱՄՆ-ում իր նոքաութը կնքի՝ մենամարտելով Դոմինիկյան Հանրապետության ներկայացուցիչ Ջովանի Լորենցոյի հետ: Շտուրմն էլ տիտղոսի պատասխանության համար պետք է մենամարտի խավարը Կասիլյեխո-Սերբասիան Սիլվեստր զույգի հաղթողի հետ:

Ոչ-ոքիներ հայ շախմատիստների պարտիաներում

Շախմատի Ուսուսասանի ակումբային առաջնության 6-րդ տուրում չորս հայ շախմատիստներն էլ իրենց թիմերի կազմերում մասնակցեցին հանդիպումներին: Նրանք բոլորն էլ մրցախաղերն ավարտեցին ոչ-ոքի: Ընդ որում, ՖԻՆԷԿ-ում հանդես եկող Սերգեյ Սովսիսյանը Իգոր Խենկինի հետ հաշտություն կնքեց արդեն 14-րդ քայլում: ՖԻՆԷԿ-ը «Սոպասիոյի» հետ մրցամարտն ավարտեց ոչ-ոքի (3-3):

Վլադիմիր Հակոբյանն էլ «Ուրալի» կազմում 23-րդ քայլին ոչ-ոքի համաձայնեց Ալեքսանդր Խալիֆմանի հետ: «Ուրալը», որ 5 անընդմեջ հաղթանակ էր տոնել, անսպասելիորեն զիջեց «64-ին»՝ 2,5-3,5: Ճիշտ է, պարտությունը չազդեց առաջատարի նրա դիրքի վրա:

ՀՍՄ-ի կազմում Կարեն Մարյանը սեւերով մրցում էր Սերգեյ Կարյակինի հետ: Երկարատեւ պայքարից հետո մրցակիցները հաշտության ձեռք մեկնեցին 53-րդ քայլին: 10 քայլ շուտ ոչ-ոքի գրանցվեց Գրիգորյանց-Յակովենկո պարտիայում: ՀՍԿ-ն 2,5-3,5 հաշվով զիջեց «Տոմսկ-400-ին»:

Սարգսյանը հաղթեց առաջատարին

Իսպանիայի շախմատի մրցաշարի 3-րդ տուրում Գաբրիել Սարգսյանն առաջին հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով մինչ այդ ապրուսակը գլխավորող չին շախմատիստ Ջժան Պենսյանի նկատմամբ: Այդ հաջողության շնորհիվ Գաբրիելը վաստակեց 2 միավոր եւ Պենսյանի ու Ֆաբիանո Կարուանայի հետ բաժանում է 2-4-րդ տեղերը: Վերջինս հաղթեց Մանուել Կանդելարիոյին:

Առաջատարը 2,5 միավոր ունեցող Մայել Ադամսն է, որն առավելության հասավ Յոու Յիֆանի նկատմամբ: Համոի Կոնեռուն էլ հաղթեց Խուլիո Գրանդային: Այսպիսով, 3-րդ տուրի չորս պարտիաներն էլ արդյունավետ եղավ ունեցան: 4-րդ տուրում Սարգսյանը սպիտակներով խաղալու է խոպանցի Մանուել Կանդելարիոյի հետ:

Օլիմպիական ջահի փոխանցումավազքը թերեւս ընդհատվի

Այսօր Պեկինում կայանալիք ՄՕԿ-ի ներկայացուցիչների խորհրդակցությունում կքննարկվի օլիմպիական ջահի փոխանցումավազքի հնարավոր դադարեցման հարցը: Նման քայլի ՄՕԿ-ին դրդել են Փարիզում եւ Լոնդոնում օլիմպիական կրակի փոխանցումավազքի ժամանակ տեղի ունեցած միջադեպերը: Տիբեթի անկախության կողմնակիցները, դժգոհելով Չինաստանի իշխանություններին վարած քաղաքականությունից, Լոնդոնում եւ Փարիզում բողոքի ակցիաներ են կազմակերպել, նույնիսկ փորձել են հարձակվել ջահակիրների վրա ու հանգցնել օլիմպիական կրակը: Լոնդոնում բողոքի ակցիային ընդհանուր առմամբ մասնակցել է 2,5 հազար մարդ: Ուսի փոխանցումավազքի մասնակիցներին ուղեկցել են ոստիկանները, որոնք առավել ակտիվ 35 բողոքավորների կալանավորել են: Փարիզում ձերբակալվել է 18 մարդ:

Փարիզը եվրոպական վերջին քաղաքն էր, որում անցկացվեց օ-

լիմպիական կրակի փոխանցումավազքը: Ֆրանսիայի մայրաքաղաքից ինքնաթիռով օլիմպիական կրակը տեղափոխվել է Սան Ֆրանցիսկո, որտեղ եւս սկսվել են բողոքի ցույցերը:

Բոլոր պատասխանները ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Տարածաշրջան

Կարապետիչը ողջունում է չեզոք վարչապետ գտնելու իշխանությունների փորձերը

Ժողովրդական կուսակցության, «ԱԼԱ հոլդինգի» նախագահ **Տիգրան Կարապետյանը**, որ երեկ «Հայաստ» ակումբի հյուրն էր, լրագրողներին տեղեկացրել է, որ դեռևս նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանի երդման արարողությանը մասնակցելու հրավեր չի ստացել, բայց սանալու դեպքում արարողությանը կմասնակցի: Արարողությանը մասնակցելը դեռևս չի նշանակի, թե Կարապետիչն ընդունում է նախագահական ընտրությունների արդյունները, որպիսեռ «մինչև կեղծիքները, հատկապես դրամական ձևով ընտրակեղծիքները չվերանան, բարեկեցիկ վիճակ չի սեղմի Տիգրան Կարապետյանը մնացել է իր նախկին կարծիքին եւ համոզված է, որ նախագահական ընտրությունների ժամանակ ընտրակաբինետներ են բաժանել բոլոր առաջատար 4 թեկնածուները:

Տիգրան Կարապետիչը ողջունել է իշխանությունների՝ չեզոք վարչապետ գտնելու մոտեցումը. «Ողջունում եմ, որ իշխանությունները վարչապետի պաշտոնի համար փնտրում են այնպիսի մարդու, որը ներքաշված չէ ներկա տնտեսական կլանների մեջ», հավելելով, որ ինքն այդ պաշտոնի համար տեսնում է Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանին, «որը օլիգարխիկ դասում չեզոք է»:

Չեզոքությունը լավ է, բայց ԺԿ ղեկավարը վստահ է, որ չեզոք մարդը կարող է լավ աշխատել, եթե վերացվեն գերիշխողները. «Ես համոզված եմ, որ Սերժ Սարգսյանը խելացի մարդ է եւ մարտի 1-ի դեպքերը կընդունի որպես ազդակ, որ պետք է որոշակի բաներ փոխվեն»: Կուսակցությունը կարծում է, որ եթե նորընտիր նախագահի քայլերն ուղղված լինեն պետականության հզորացմանը, 5 տարի հետո նման իրավիճակ կարող է եւ չկրկնվել:

Կարապետիչը չի մոռացել նաեւ նորընտիր նախագահին հուշել, որ նրա լավագույն քայլը կլինի խորհրդարանի լուծարումը, քանի որ դա ցույց կտա, որ իշխանությունը պատրաստ է հիմնել նորը. «Իշխանությունը պետք է հասկանա, որ ազգային համաձայնության կարիք կա»:

ԳՈՏԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ռոբերտ Նազարյանը վերահաստատեց, որ սակագների փոփոխություններ չեն սպասվում

«Ֆրիսյոֆ Նանսեն» հիմնադրամի նախագահ Ֆելիքս Բախչինյանը երեկ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Նազարյանին ընտրել է Ֆրիսյոֆ Նանսենի անվան հուշամեդալ:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահը մեծ պատիվ է համարել այս հուշամեդալով պարգեւատրվելը, ասելով, որ այն նաեւ պարտավորեցնող է եւ նոր լիցքեր է հաղորդելու իրեն:

Պարգեւատրման արարողությունից հետո Ռոբերտ Նազարյանը պատասխանեց նաեւ իր ղեկավարած ոլորտին առնչվող լրագրողների հարցերին: Նա մասնավորապես հաստատեց տեղեկատվությունը, որ «Երեւան ջուր» հանձնաժողով է դիմել ջրի սակագների բարձրացման համար: Այդ դիմումը ստացվել է փետրվարի 28-ին, եւ հանձնաժողովը 90 օր ժամանակ ունի ուսումնասիրելու համար: Այդտեղից հանձնաժողովի նախագահը վերահաստատեց, որ այս տարի, ամենայն հավանականությամբ, սակագների բարձրացում չի լինի, իսկ եթե «Երեւան ջրի» հայտի ուսումնասիրությունից պարզվի, որ դա անհրաժեշտ է, ապա այդ բարձրացումը կտեղափոխվի այն տարիները, երբ ընկերությունը, պայմանագրի համաձայն, պետք է նվազեցներ սակագները:

Ինչ վերաբերում է Հայաստանում բջջային երրորդ օպերատորի մուտք գործելուն, ապա տեղեկացվեց, որ այժմ այդ աշխատանքներն ընթացքի մեջ են: Կառավարությունը մինչեւ մայիսի 1-ը կսահմանի մրցույթի կարգը, որից հետո կհայտարարվի մրցույթը եւ մինչեւ օգոստոս հայտնի կդառնա դրա հաղթողը:

Ա. Մ.

Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը ապրիլի 8-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանը, հաստատեց «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը, «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը», «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը», «ՀՀ ԿԲ կողմից միջազգային շուկայում կնքված ֆյուչերսային պայմանագրերի հաշվապահական հաշվառման կարգը» եւ ՀՀ ԿԲ նախագահի նախահաշվի եւ կապիտալ ներդրումների 2007 թ. չորրորդ եռամսյակի եւ 2007 թ. տարեկան ծրագրի կատարողականը:

Փոփոխություններ կատարվեցին ՀՀ ԿԲ 2008թ. նախագահի նախահաշվի եւ կապիտալ ներդրումների տարեկան ծրագրում, «ՀՀ կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման վարման կանոնները» ձեռնարկում եւ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման հաշիվների եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի արտահաշվեկշռային հաշվառման հաշիվների պլանում»: Լրացում կատարվեց 2008-2009 թթ. ՀՀ հուշադրամների թողարկման ծրագրում:

Փոփոխություններ եւ լրացումներ կատարվեցին «ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանում», «ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգում», «ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանում» եւ «ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգում»:

Ուժը կորցրած ճանաչվեցին «Միտրա» ՍՊԸ-ի առաջնորդական բրոներային (միջնորդային) գործունեության թիվ ԱՍԳ 0011 լիցենզիան եւ «ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԲՐՈՔԵՐՍ» ՍՊԸ-ի առաջնորդական բրոներային (միջնորդային) գործունեության թիվ ԱՊԲ 0013 լիցենզիան:

ԿԲ խորհուրդը հաստատեց 2008-2009 թթ. հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված Կովկասի կենդանական աշխարհը միջազգային ծրագրի «Բեզոարյան այծ», «Կովկասյան թավոշն բվիկ» հուշադրամների ուղղագծերը, 2008-2009 թթ. հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված կենդանակերպի նշաններ միջազգային ծրագրի շրջանակներում թողարկվող թվով 12 հաս ոսկե հուշադրամների ուղղագծերը եւ տեխնիկական չափանիշները, եւ 2008-2009 թթ. հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված հուշադրամները շրջանառության մեջ դնելու ժամկետները եւ դրանց նկարագրությունները:

ԿԲ մամուլի ծառայություն

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների գործարարներին եւ կազմակերպություններին

Սլովակիայի առեւտրային բանկերը Հայաստանի եւ Արցախի գործարարներին եւ կազմակերպություններին տրամադրում են ապրանքային վարկեր՝ ՀՀ եւ ԼՂՀ-ում գործող տոկոսադրույքներից էապես ցածր տոկոսներով:

Վարկի մարումը սկսվում է ձեռակերպումից մեկ տարի անց: Մարման ժամկետը մինչեւ հինգ տարի:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել 54-89-36, կամ 094 366-989 հեռախոսահամարներով:

ԿՈՄՈՏԱՐԱՍ

Ցերեռուկ հարսի տոլիպ-ջեռեսական գարեգործնեն արտադրության հասարակություն

2007 թվականի գործունեության վերաբերյալ

Ցերեռուկ հարսի տոլիպ-ջեռեսական գարեգործնեն արտադրության հիմնարկի կարտեռեն ստեղծում՝ հիմնարկի ոեռական գրանցում տարվել է 2007 թ.-ի հուլիսի 23-ին: 99 ոեռական տեղական ինքնակառավարման մարմնի կողմից թիվ 222.160.00743 գրանցման համարով, ինչը պահանջվել է իրավաբանական անձի ոեռական գրանցման թիվ 03K075199 վկայականով:

Ինքնարարի հիմնական նպատակներից է արտադրել 99 վաղը նոր մարի Ցերեռուկ հարսի տոլիպ-ջեռեսական գարեգործնեն ուղղված միջոցառումներին, ինչպիսիք են Ցերեռուկ հարսում առողջանալու ընդլայնումը հարմարավետ հարմարանքների տեղադրման ուղղությամբ գործունեությունը, ջեռատրանսպորտի միջոցառումների իրականացումը, տրանսպորտների եւ ծառայությունների կատարելագործմանն ուղղված ծրագրի ձեւավորումը եւ իրականացումը, Ցերեռուկ հարսի Կեչուտ գյուղի որոշ գյուղական ընտանեքների, գարեգործնեն ծրագրի ձեւավորումը եւ իրականացումը, բանկային հաշվարարակների կառուցումը եւ կահավորումը, տոլիպատիպ անասուններով ընտանիքներին ապահովագրումը, այլ միջոցառումներ, որոնք նպաստում են Ցերեռուկ հարսի կենսամակարդակի գարեգործնեն:

2007 թ.-ի ընթացքում հիմնարկի միջոցները գրաղել են թե՛ իրավաբանական եւ թե՛ ֆիզիկական անձանց նվիրատվություններից:

2007 թ.-ի ընթացքում հիմնարկին ընդհանուր առմամբ իրականացել է 18843900 (տասնութ միլիոն ութ հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր) 99 դրամի կանոնադրական նպատակներին ուղղված ծրագրեր, որից

* 5250000 (հինգ հարյուր հիսուն հազար հինգ հարյուր) 99 դրամի ծառայություններ է դրամաշնորհ «Բարեհորդում» ՍՊԸ ընկերությանը, ինչի արդյունքում բարեկարգվել եւ կարգավորվել է Ցերեռուկ հարսի որոշ արահետներ:
* 15000000 (տասնհինգ միլիոն) 99 դրամ հատկացվել է հիվանդանոցին՝ նպատակի ապիտակարգի եւ գրեթե հարկերի դարձած նոր սարքավորում:
* 500000 (հինգ հարյուր հիսուն հազար) 99 դրամ հատկացվել է տոլիպատիպ անասնամով ընտանիքներին:
* Տող է լրացել եւ Ցերեռուկի թիվ 1 թիվ 2 դպրոցներին անհրաժեշտ, օգնության կարգով տրամադրվել է ընդհանուր 1240000 (մեկ միլիոն երկու հարյուր քառասուն հազար) 99 դրամ ներքին գործերներ եւ սարքավորումներ,
* 95000 (իննսունհինգ հազար) 99 դրամ տրամադրվել է Կեչուտ գյուղի նորաստեղծ հարազատների թոշակների փոխգանձը,
* Տող է լրացել եւ Ցերեռուկի հարսահեռարանի ենթակայության ներքին ուղիների ասֆալտի դրոշմի անհրաժեշտ, օգնության կարգով տրամադրվել է ընդհանուր 1436400 (մեկ միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար չորս հարյուր) 99 դրամի կամիրջ:

Ինքնարարի խորհուրդը բաղկացած է 7 (յոթ) անդամներից

Ինքնարարի գործերն է հետագայում հիմնադիրները, գործադիր հանձնախումբը՝ Կարեն Երիցի Մխիթարյանը:

Տնօրեն՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գլխավոր հաշվապահ՝ Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ցերեռուկ հարսի տոլիպ-ջեռեսական գարեգործնեն արտադրության հիմնարկ

Հասցե՝ ք. Ցերեռուկ, Սիսվանների 8

ԳՀՇ 091 04 402

Հաշվապահական հաշվեկշիռ

2007 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (հազար դրամներով)

Անվանում	Տող	2006 թ.	2007 թ.
I. Մշտական գործիքներ			
Մշտական գործիքներ	080	0	0
II. Շրջանառու գործիքներ			
Հումքերի, նյութերի եւ դրանց հավելումներ	200	0	169
Շրջանառու գործիքներ	220	0	169
Գումարներ	230	0	169
Պասիվներ	Տող	2006 թ.	2007 թ.
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական դրամագիր	370	0	(12)
Ընդամենը սեփական կապիտալ	300	0	(12)
V. Շրջանառու պարտավորություններ			
Կարճաժամկետ վերջնական պարտքեր մատակարարներին	410	0	5
Կարճաժամկետ պարտավորություններ պարտադիր հարկերի եւ պետական վերջնական պարտքեր սոցիալական ապահովագրության եւ աշխատանքային աշխատավարձերի գծով	420	0	72
Ընդամենը շրջանառու պարտավորություններ	430	0	104
Գումարներ	480	0	181
	500	0	169

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2007 թ. տարեկան (հազար դրամներով)

Անվանում			
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գծով զուտ եկամուտ (վաճառք)	050	0	(363)
Գործառնական ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ	060	0	(363)
Գործառնական ծախսեր	070	0	19 200
Գործառնական ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ	071	0	19 200
Գործառնական արդյունքներ	080	0	(19 849)
Գործառնական հարկեր	081	0	(19 849)
Գործառնական շահույթ (վնաս)	090	0	(12)
Արտարժութային գործարքներից շահույթ (վնաս)	140	0	(12)
Զուտ շահույթ (վնաս) նախնական շահույթի, գծով հարկի հետգանձումից հետո	160	0	(12)
Զուտ շահույթ (վնաս) շահույթի, գծով հարկի հետգանձումից հետո	180	0	(12)

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Ավտոմեքենա «Գրանդ չերոկի» (լոռեղո), 2004 թ., շարժիչի ծավալը՝ 4,0 լիտր: Հեռ.՝ 093-36-10-07

Կորել է

«Դանա եւ էդվարդ» ՍՊԸ-ի կնիք կնիքը եւ դրոշմակնիքը:

Դանել անվանվել

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

2 կից բնակարաններ Սայաթ-Նովա 3 շենքի առաջին հարկում՝ օպերայի հարեւանությամբ:

Ընդհանուր մակերեսը 150մ. է, առաստաղի բարձրությունը 4.50մ է: Հարմար է օգտագործել որպես օֆիսային տարածք, խանութ կամ խանութ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել **094 36-69-89** հեռախոսահամարով:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՅԱՆԳՈՒՇԱՐԵԼ՝ 58-20-60

Լուսանկարները՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայական համար՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Հոդարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Ասեղիեան: Տպաքանակ՝ 3000, սահմանված է տպագրության՝ 8.04.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: